

---

Recommendation of the Committee of Ministers to member States on integrated national strategies for the protection of children from violence

*Unofficial translation into Armenian*

Recommandation du Comité des Ministres aux Etats membres sur les stratégies nationales intégrées de protection des enfants contre la violence

*Traduction non officielle en arménien*

**Երեխաներին բռնությունից պաշտպանելու միասնական ազգային ռազմավարություն-ների Եվրոպայի խորհրդի քաղաքականության ուղենիշները**

---

© Council of Europe [November 2009], original English and French versions

*Text originated by, and used with the permission of, the Council of Europe. This unofficial translation is published by arrangement with the Council of Europe, but under the sole responsibility of the translator.*

\* \* \* \* \*

© Conseil de l'Europe [novembre 2009], versions originales en anglais et français

*Le texte original provient du Conseil de l'Europe et est utilisé avec l'accord de celui-ci. Cette traduction est réalisée avec l'autorisation du Conseil de l'Europe mais sous l'unique responsabilité du traducteur.*

## Երեխաներին բռնությունից պաշտպանելու միասնական ազգային ռազմավարությունների Եվրոպայի խորհրդի քաղաքականության ուղենիշները

### Ներածություն

2005թ. Պետությունների և կառավարությունների ղեկավարների Վարշավայի վեհաժողովը խնդրել էր Եվրոպայի խորհրդին՝

- արդյունավետ կերպով աջակցել երեխաների իրավունքներին և լիովին իրականացնել երեխաների իրավունքների վերաբերյալ Միացյալ ազգերի կոնվենցիայի պարտավորությունները,
- Եվրոպայի խորհրդի ողջ քաղաքականության մեջ հիմնուղի դարձնել երեխաների իրավունքը և համաձայնեցնել Եվրոպայի խորհրդի՝ երեխաներին վերաբերող ողջ գործունեությունը,
- արմատախիլ անել երեխաների դեմ ուղղված բռնության բոլոր ձևերը, մասնավորապես՝ գործի դնելով գործողությունների եռամյա ծրագիրը և հատուկ միջոցառումներ երեխաների սեռական շահագործման դեմ:

«Կառուցել Եվրոպա երեխաների հետ և երեխաների համար» ծրագրի գործարկումը 2006թ. պատասխան էր այս հանձնարարագրին, որը այնուհետև սահմանվեց Ստոկհոլմում ընդունված՝ նրա 2009-2011թթ. Ռազմավարությունների մեջ: Ծրագրի գլխավոր նպատակն էր օգնել որոշում ընդունողներին և շահագրգիռ կողմերին՝ ձեռնարկել և իրագործել **բազմակողմանի ազգային ռազմավարություններ և քաղաքականություն**՝ առաջ մղելու երեխաների իրավունքները և արմատախիլ անելու երեխաների դեմ ուղղված ամեն կարգի բռնություն՝ ՄԱ Երեխայի իրավունքների կոնվենցիայի լույսի ներքո և ինչպես հանձնարարված է ՄԱ Երեխայի իրավունքների կոմիտեի կողմից և Գլխավոր քարտուղարի՝ Երեխաների դեմ ուղղված բռնությունների վերաբերյալ ուսումնասիրությունում:

Եվրոպական մակարդակով հանձնարարականներ ձևակերպելու համար Եվրոպայի Խորհուրդը սկսել է ուսումնասիրել՝ ինչպես են անդամ Երկրներում **ազգային քաղաքականությունները, օրենսդրությունները և գործողությունները զբաղվել բռնության խնդրով**: Մշակված մեթոդաբանությունը ներառում է երեխաների դեմ ուղղված բռնության աստիճանի ու բնույթի խորքային վերլուծությունը, այս երևույթին հակազդելու համար իրավական և սահմանակարգային կառույցների ներդրումը, քաղաքականության իրագործման վերջին միտումները, ազգային և տեղական կանխարգելիչ ռազմավարությունները և դրանց իրագործումը: Չորս երկիր՝ Իտալիան, Նորվեգիան, Պորտուգալիան և Ռումինիան, ցանկություն են հայտնել ազգային քաղաքականության առաջին ստուգման համար:

Լայն և բազմակի խորհրդակցությունները յուրաքանչյուր փորձվող երկրում պսակվեցին չորս ազգային զեկույցներով, որոնք առաջարկություններ էին պարունակում բռնության դեմ ռազմավարության մոդելի համար և ազգային, տարածքային ու տեղական դրական փորձառության օրինակներ էին առաջարկում դրա մեջ ներառելու համար: Հիմնվելով զեկույցների եզրակացությունների և ՄԱ՝ Երեխաների հանդեպ բռնության մասին ուսումնասիրության հանձնարարականների վրա, ինչպես նաև ընդհանուր առմամբ նկատի

ունենալով Երեխայի իրավունքների ուղղությամբ Եվրոպայի խորհրդի աշխատանքը՝ Երեխաներին բռնությունից պաշտպանելու համար միասնական ազգային ռազմավարությունների Եվրոպայի խորհրդի քաղաքականության ուղենիշները առաջարկում են **բազմաճյուղ և համակարգված ազգային կառուցվածք**՝ կանխելու և արձագանքելու երեխաների դեմ ուղղված բռնության բոլոր գործողություններին: Նաև ակնկալվում է, որ Ուղենիշները կխթանեն երեխաներին՝ որպես փոփոխության մասնակից և մանկությունը՝ ամբողջությամբ վերցված հասարակության մեջ ընկալելու խիստ պահանջված մշակութային փոփոխությունը:

Թեև սկզբնապես ուղենիշները նախատեսված էին ազգային, տարածքային և տեղական մակարդակներում որոշում ընդունողների համար, դրանք ուղղված են նաև երեխաների հետ և նրանց համար աշխատող բոլոր մասնագետներին, ինչպես նաև ընտանիքներին, քաղաքացիական հասարակությանը, համայնքներին, լրատվամիջոցներին և իրենց երեխաներին:

Ուղենիշները մշակվել են տ. Մարթա Սանթոս Պաիսի նախագահած խմբագրական խմբի կողմից՝ բաղկացած չորս փորձվող երկրների ներկայացուցիչներից, տեղական և միջազգային փորձագետներից, UNICEF-ի, OHCHR-ի, Եվրոպական հանձնաժողովի, երեխաների իրավունքների պաշտպանների և ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներից: Կազմման ընթացքում ուղենիշները ներկայացվել են բազմաթիվ գործընկերների, նախ բարձր մակարդակի խորհրդակցության առիթով Ստոկհոլմում, Շվեդիա (2008թ. սեպտեմբերի 8-10), և ապա՝ Երեխաների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի ծրագրում Ստրասբուրգում (2009թ. հունիսի 1-2)՝ ապահովելով քննարկման լայն գործընթաց հիմնական շահագրգիռ կողմերի հետ՝ ներառյալ Եվրոպայի Խորհրդի համապատասխան ղեկավար կոմիտեները և մարմինները:

2009թ. նոյեմբերին Եվրոպայի խորհրդի 47 անդամ երկրները ներկայացնող Նախարարների կոմիտեն ընդունեց ուղենիշները պարունակող հանձնարարական: Եվրոպայի խորհրդի ցանկությունն է, որ այդ տեքստը և դրա ընդունմանն ուղղված գործընթացը ոգեշնչի մշակելու ազգային ռազմավարություններ ինչպես Եվրոպայում, այնպես էլ Եվրոպական տարածաշրջանից դուրս:

### **Հանձնարարական CM/Rec (2009)10**

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի Խորհրդի կանոնադրության 15.7 հոդվածի պայմանների համաձայն,

Վկայակոչելով Երկրների և կառավարությունների ղեկավարների երրորդ վեհաժողովը (Վարչավա, 2005թ. մայիսի 16-17) և երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերի վերացման համար հատուկ գործողություն ծավալելու այնտեղ ստանձնած պարտավորությունը,

Վկայակոչելով «Կառուցել Եվրոպա երեխաների համար և երեխաների հետ – 2009-2011 թթ. ռազմավարությունը», Եվրոպայի խորհրդին հատկացնելով երեխաների նկատմամբ բռնության դեմ պայքարելու ազգային և տարածաշրջանային նախաձեռնությունների և Միավորված ազգերի Գլխավոր քարտուղարի՝ Երեխաների հանդեպ բռնության մասին

ուսումնասիրության մեջ ներառված հանձնարարականների հետևողական կատարման ազգային և տարածաշրջանային նախաձեռնողի և համաձայնեցնողի դերը,

Վկայակոչելով Եվրոպայի Խորհրդի կողմից 2008թ. հունիսի 15-ին Չագրեբում, Խորվաթիա, ձեռնարկած՝ իրազեկման բարձրացման համաեվրոպական «Ձեռքդ բարձրացրու ապտակի դեմ» քարոզարշավը երեխաների մարմնական պատիժների դեմ,

Համարելով, որ երեխաների բարօրությունը և բարձրագույն շահերը բոլոր անդամ երկրների կողմից ընդունված հիմնարար արժեք են և պետք է սատարվեն առանց որևէ խտրականության,

Ընդունելով, որ բռնությունը երեխաների նկատմամբ նշանակում է բռնություն երեխայի իրավունքների դեմ, վտանգում է երեխաների զարգացումը և ազդում է մյուս հիմնարար իրավունքներից նրանց օգտվելու վրա,

Տեսնելով, որ բռնությունը երեխաների նկատմամբ գոյություն ունի ամեն մի երկրում և կտրում-անցնում է սեռի, ռասայի, գույնի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ կարծիքի, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնության պատկանելու, ունեցվածքի, ծննդի, սեռական կողմնորոշման, առողջական վիճակի, հաշմանդամության կամ այլ կարգավիճակի սահմանները,

Համարելով, որ երեխաների դյուրաբեկությունն ու խոցելիությունը և աճի ու զարգացման համար նրանց կախվածությունը մեծերից ավելի մեծ ներդրում է պահանջում ընտանիքի, հասարակության և պետության կողմից բռնության կանխարգելման և երեխաների պաշտպանության գործում,

Հաշվի առնելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ETS № 5), որ անդամ երկրների իրավասության շրջանակներում յուրաքանչյուրի համար, ներառյալ և երեխաները, երաշխավորում է խոշտանգումներից, անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքից կամ պատժից պաշտպանված լինելու իրավունքը, ազատության և ապահովության իրավունքը, արդար դատավարության իրավունքը,

Հաշվի առնելով Եվրոպական վերանայված սոցիալական խարտիան (ETS № 163), մասնավորապես՝ անվտանգությունից, բռնությունից և շահագործումից պաշտպանված լինելու՝ երեխաների իրավունքների վերաբերյալ նրա դրույթները,

Նկատի ունենալով Երեխաների իրավունքների իրականացման մասին Եվրոպական կոնվենցիան (ETS № 160), Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի գործողությունների մասին կոնվենցիան (CETS № 197), Սեռական շահագործումից և սեռական բռնություններից երեխաների պաշտպանության մասին կոնվենցիան (CETS № 201) և Եվրոպայի խորհրդի այլ համապատասխան իրավական փաստաթղթերը,

Հաշվի առնելով անդամ երկրներին Նախարարների կոմիտեի հետևյալ հանձնարարականները՝ Հանձնարարական CM/Rec(2009)5՝ երեխաներին վնասակար բովանդակությունից ու

վարքագծից պաշտպանող և նոր տեղեկատվական և հաղորդակցական միջավայրին նրանց ակտիվ մասնակցությանը աջակցող միջոցառումների մասին. Հանձնարարական CM/Rec(2008)11՝ պատժամիջոցների կամ միջոցառումների ենթակա անչափահաս իրավախախտների համար եվրոպական կանոնների մասին, Հանձնարարական Rec(2006)19՝ դրական ծնող լինելուն սատարելու քաղաքականության մասին, Հանձնարարական Rec(2006)12՝ նոր տեղեկատվական և հաղորդակցական միջավայրում երեխաներին սատարելու մասին, Հանձնարարական Rec(2006)5՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքները և հասարակության մեջ լիակատար մասնակցությունը սատարելու Եվրոպայի խորհրդի գործողությունների նախագծի մասին՝ 2006-2015 թթ. հաշմանդամություն ունեցող մարդկանց կյանքի որակի բարելավումով, Հանձնարարական Rec(2005)5՝ փակ հիմնարկներում ապրող երեխաների իրավունքների մասին, Հանձնարարական Rec(2002)5՝ բռնություններից կանանց պաշտպանելու մասին և Հանձնարարական Rec(2001)16՝ երեխաներին սեռական շահագործումից պաշտպանելու մասին,

Հաշվի առնելով Եվրոպայի Խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հետևյալ հանձնարարականները՝ Հանձնարարական 1854 (2009)՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար իրավունքների հասանելիության և հանրության կյանքին նրանց լիակատար և գործուն մասնակցության մասին, Հանձնարարական 1828 (2008)՝ ապօրինի որդեգրության համար Եվրոպայում նորածին մանուկների անհայտացման մասին, Հանձնարարական 1815 (2007)՝ մարմնավաճառության մասին - ինչ դիրք ընդունել, Հանձնարարական 1666 (2004)՝ երեխաների մարմնական պատիժների համաեվրոպական արգելքի մասին,

Նկատի ունենալով նաև Եվրոպական Խորհրդի կոնվենցիան երեխայի իրավունքների մասին, հատկապես դրա 19-րդ հոդվածը, որը սահմանում է հստակ պարտավորություն, որ երկրները պաշտպանեն երեխաներին բռնության բոլոր ձևերից՝ ամեն ժամանակ և ամենուրեք,

Պատշաճ ուշադրություն դարձնելով այս բնագավառում այլ համապատասխան միջազգային փաստաթղթերին և պարտավորություններին՝ ներառյալ Ռիո դե Ժանեյրոյի Հռչակագիրը և գործողության կոչը՝ կանխելու և դադարեցնելու երեխաների ու դեռահասների սեռական շահագործումը (2008),

Վկայակոչելով Միավորված ազգերի Գլխավոր քարտուղարի՝ Երեխաների հանդեպ բռնության մասին ուսումնասիրության հանձնարարականները՝ մասնավորապես, երեխաների հանդեպ բռնությանն արձագանքող՝ ազգային ռազմավարության, քաղաքականության կամ ծրագրի միջոցով ազգային պլանավորման գործընթացի մեջ ներառված բազմակողմանի և համակարգված կառույց մշակելու և կենտրոնական կետը սահմանելու, գերադասելի է, նախարարների մակարդակով՝ բռնության կանխման և դրան արձագանքող միջոցառումների իրագործումը վերահսկելու նպատակով,

Հավատարիմ երեխաների իրավունքների ապահովման և երեխաներին բռնության բոլոր ձևերից պաշտպանելու՝ Երեխայի իրավունքների մասին Միավորված ազգերի կոնվենցիայի, Եվրոպայի խորհրդի չափորոշիչների վրա հիմնված և երեխաների մասնակցությամբ մշակված միասնական ազգային ռազմավարությունների աջակցմանը,

Հանձնարարում է, որ անդամ երկրների կառավարությունները, հարգելով իրենց միջազգային պարտավորությունները և պատշաճ ուշադրություն դարձնելով դրանց առանձնահատուկ ազգային, տարածքային և տեղական կառուցվածքների ու համապատասխան պատասխանատվությունների վրա՝

ա. իրենց օրենսդրության, քաղաքականության և գործունեության մեջ ըստ հարմարության ներառեն և ըստ հարմարության կիրառեն երեխաներին բռնությունից պաշտպանելու՝ Եվրոպայի խորհրդի քաղաքականության ուղենիշները միասնական ազգային ռազմավարությունների վերաբերյալ, ինչպես դրանք տրվում են այս հանձնարարականի I Հավելվածում,

բ. աջակցեն Ուղենիշների իրագործմանն ու կիրառմանը այն բնագավառներում, որոնք չեն մտնում իշխանությունների ուղղակի պատասխանատվության կամ իրավասության մեջ, բայց որտեղ նրանք այնուամենայնիվ որոշ ազդեցություն ունեն կամ կարող են որոշ դեր խաղալ,

գ. ապահովեն այս հանձնարարականի հնարավորինս լայն տարածումը՝ իրազեկումն ավելացնող քարոզարշավների միջոցով և համագործակցելով քաղաքացիական հասարակության, երեխաների իրավունքների անկախ հաստատությունների, լրատվամիջոցների, մասնավոր հատվածի, երեխաների և ընտանիքների հետ,

դ. երեխայի իրավունքների և երեխաների հանդեպ բռնությունների վերացման վերաբերյալ իրենց կենտրոնական կետերի միջոցով համագործակցեն Եվրոպայի խորհրդի հետ ազգային ռազմավարությունների մշակման, իրագործման և վերահսկման գործում,

ե. համագործակցեն և աջակից լինեն երեխաների հանդեպ բռնության հարցերով Միավորված ազգերի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչին:

## **Հավելվածներ Նախարարների կոմիտեի CM/Rec(2009)10 Հանձնարարականին**

### **Բովանդակություն<sup>1</sup>**

**Հավելված I** – Եվրոպայի Խորհրդի քաղաքականության ուղենիշները երեխաներին բռնությունից պաշտպանելու միասնական ազգային ռազմավարությունների վերաբերյալ

#### 1. Ղեկավար ամփոփում

---

<sup>1</sup> Նախարարների կոմիտեի և Խորհրդարանական վեհաժողովի բոլոր վկայակոչված տեքստերը Եվրոպայի Խորհրդից են:

2. Նպատակներ, ընդգրկում, սահմանումներ և սկզբունքներ
  - 2.1. Նպատակներ
  - 2.2. Ընդգրկում և սահմանումներ
  - 2.3. Սկզբունքներ
  
3. Միասնական ազգային, տարածքային և տեղական գործունեություն
  - 3.1. Միասնական ազգային ռազմավարություններ երեխաներին բռնությունից պաշտպանելու համար
  - 3.2. Տարածքային և տեղական գործունեություն
  
4. Երեխայի իրավունքների հանդեպ հարգանքի մշակույթի ձևավորում
  - 4.1. Կրթություն և իրազեկման ավելացում
  - 4.2. Մասնագիտական վարժեցում
  - 4.3. Լրատվամիջոցներ և տեղեկատվական հասարակություն
  
5. Կառուցվածքներ
  - 5.1. Իրավական կառուցվածք
  - 5.2. Քաղաքականության կառուցվածք
  - 5.3. Սահմանակարգային կառուցվածք
  
6. Երեխային նպաստող ծառայություններ և մեխանիզմներ
  - 6.1. Ընդհանուր սկզբունքներ
  - 6.2. Երեխայի խնամքի չափորոշիչներ
  - 6.3. Անկախ մշտադիտարկում
  - 6.4. Իրազեկում բռնության մասին
  - 6.5. Քննարկման մեխանիզմներ
  - 6.6. Ապաքինում, վերականգնում և սոցիալական վերաներգրավում
  - 6.7. Արդարադատության համակարգ
  
7. Հետազոտում և փաստեր
  
8. Միջազգային համագործակցություն

**Հավելված II – Տերմինների բառացանկ**

**Հավելված III – Երեխայի իրավունքների ապահովմանն ուղղված և երեխաներին բռնությունից պաշտպանող միջազգային տեքստեր**

**Հավելված IV – Այլ գործողություններ և հրապարակումներ**

**Հավելված I CM/Rec(2009)10 Հանձնարարականին**

**Եվրոպայի խորհրդի քաղաքականության ուղենիշները երեխաներին բռնությունից պաշտպանելու միասնական ազգային ռազմավարությունների վերաբերյալ**

## 1. Ղեկավար ամփոփում

Երեխայի իրավունքների մասին Միավորված ազգերի կոմիտեի և Միավորված ազգերի Գլխավոր քարտուղարի՝ Երեխաների հանդեպ բռնության մասին ուսումնասիրության հանձնարարականների համապատասխան՝ այս ուղենիշները աջակցում են երեխայի իրավունքների պաշտպանության և երեխաների նկատմամբ բռնության վերացման ազգային ամբողջական կառուցվածքի մշակմանը և իրագործմանը:

Ուղենիշները հղում են «երեխաներ» և «բռնություն» հասկացությունների սահմանումներին, ինչպես տրված են Երեխայի իրավունքների մասին Միավորված Ազգերի կոնվենցիայի 1-ին և 19-րդ հոդվածներում համապատասխանաբար (այսուհետև հղվում է որպես ՄԱԿԵԻՄ):

Ուղենիշները հիմնված են ութ ընդհանուր (պաշտպանություն բռնությունից, կյանքի և առավելագույն գոյատևման ու զարգացման իրավունք, անխտրականություն, սեռերի հավասարություն, երեխաների մասնակցություն, պետության պարտավորություններ, այլ անձանց պարտավորություններ և մասնակցություն, երեխայի բարձրագույն շահեր) և չորս գործունեական (բռնության բազմակողմանի բնույթ, ինտեգրված մոտեցում, համագործակցություն հատվածների միջև, բազմամասնակցական մոտեցում) սկզբունքների վրա: Այս սկզբունքները տիրում են ամենուրեք՝ ներառյալ միասնական ազգային, տարածքային և տեղական գործունեությանը, կրթությանը և իրազեկման ավելացման միջոցառումներին, իրավական, քաղաքական և սահմանակարգային կառուցվածքներին, հետազոտմանը և փաստերի հավաքմանը վերաբերող հատվածները:

Ուղենիշները աջակցում են երեխայի իրավունքների խորքային իմացության և երեխաների խոցելիության ու կարողությունների ըմբռնման վրա հիմնված՝ երեխայի իրավունքների նկատմամբ հարգանքի մշակույթի զարգացմանը: Գլխավոր թիրախային խումբն ընդգրկում է երեխաների հետ շփվող բոլոր համապատասխան մասնագետներին:

Ուղենիշների ամենաեական հանձնարականները կոչ են անում զարգացնել միասնական ազգային ռազմավարություն՝ պաշտպանելու համար երեխաներին բռնությունից: Ռազմավարությունը պետք է հասկանալ որպես բազմակողմանի և համակարգված կառուցվածք՝ լիովին ընդգրկված երեխայի իրավունքները սատարելու և պաշտպանելու ազգային քաղաքականության մեջ՝ հատուկ ժամանակային սահմաններով, իրատեսական նպատակակետերով, համաձայնեցված և վերահսկվող մեկ գործակալության կողմից (որտեղ դա հնարավոր է և համաձայն ազգային կանոնադրություններին), օժտված համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսներով և հիմնված արդիական գիտական իմացության վրա:

Ուղենիշները քաջալերում են գորեղացնելու միջազգային համագործակցությունը՝ կանխելու համար երեխաների նկատմամբ բռնությունը ամբողջ Եվրոպայով մեկ:

## 2. Նպատակներ, ընդգրկում, սահմանումներ և սկզբունքներ

### 1.1. Նպատակներ

Այս ուղենիշների նպատակներն են՝

ա. պաշտպանել երեխաների իրավունքները, հատկապես նրանց, ովքեր բռնության զոհ են դարձել,

բ. կանխարգելել և մարտնչել երեխաների հանդեպ բռնության բոլոր ձևերի դեմ,

գ. երեխաներին բռնությունից պաշտպանելու համար խթանել միասնական ազգային ռազմավարությունների ընդունումը, իրագործումը և վերահսկումը,

դ. գորացնել միջազգային համագործակցությունը՝ երեխայի իրավունքները պահպանելու և երեխաներին բռնությունից պաշտպանելու համար:

## 1.2. Ընդգրկում և սահմանումներ<sup>2</sup>

1. «Երեխա»-ն պետք է նշանակի մինչև 18 տարեկան յուրաքանչյուր անձի, ներառյալ բռնության զոհերին, ականատեսներին և կատարողներին:

2. Համաձայն ՄԱԿԵԻՄ-ի 19-րդ հոդվածի՝ «բռնություն»-ը սահմանվում է որպես ֆիզիկական կամ հոգեկան բռնության բոլոր ձևերն ընդգրկող բռնություն, անարդարություն, չարաշահում, արհամարհանք և անփույթ վերաբերմունք, վատ վերաբերմունք կամ շահագործում, ներառյալ սեռական ոտնձգությունը<sup>3</sup>: Այս սահմանումը ներառում է երեխաներին բռնության վտանգին ենթարկելը տանը կամ այլուր: Բռնությունը հասկացվում է ոչ միայն մեծի ու երեխայի, այլև երեխաների միջև պատահող:

## 1.3. Սկզբունքներ

### Ընդհանուր սկզբունքներ

#### *Պաշտպանություն բռնությունից*

Բոլոր երեխաներն ունեն պաշտպանության իրավունք ֆիզիկական և հոգևոր բռնության՝ անարդարության, չարաշահման, արհամարհանքի և անփույթ վերաբերմունքի, վատ վերաբերմունքի կամ շահագործման բոլոր ձևերից՝ ներառյալ սեռական ոտնձգությունը, քանի դեռ գտնվում են

ծնող(ներ)ի, օրինական խնամակալի կամ նրանց խնամող այլ անձի խնամքի տակ<sup>4</sup>:

#### *Կյանքի և առավելագույն գոյատևման ու զարգացման իրավունք*

<sup>2</sup> Հղել նաև Հավելված II-ին՝ Տերմինների բառացանկին:

<sup>3</sup> Հղել նաև Երեխայի իրավունքների մասին Միավորված Ազգերի կոնվենցիային կից կամընտիր արձանագրությանը երեխաների վաճառքի, մանկական մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին և Երեխայի իրավունքների մասին Միավորված Ազգերի կոնվենցիային կից կամընտիր արձանագրությանը զինված ընդհարումների մեջ երեխաների ներքաշման մասին:

<sup>4</sup> ՄԱԿԵԻՄ, Հոդված 19:

Ամեն երեխա ունի կյանքի և գոյատևման ու հնարավորինս առավելագույն աստիճանի զարգացման<sup>5</sup> անկապտելի իրավունք:

### *Անխտրականություն*

Բոլոր երեխաները՝ անկախ նրանց սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ կարծիքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնության պատկանելությունից, ունեցվածքից, ծնունդից, սեռական կողմնորոշումից, առողջական վիճակից, հաշմանդամության կամ այլ կարգավիճակից, պետք է պաշտպանված լինեն բռնության բոլոր ձևերից և այնպիսի խնամք և օժանդակություն ստանան, որը կապահովի նրանց գոյատևումն ու հնարավորինս առավելագույն աստիճանի զարգացումը:

### *Մեռերի հավասարություն*

Բռնության սեռական կողմերին պետք է անդրադառնալ որպես բռնության միասնական ընկալման մի մասին, և պետք է պատշաճ ուշադրություն դարձվի բռնության տեսակետից տարբեր վտանգներին, որոնց առաջ կանգնած են տղաներն ու աղջիկները, և բռնության տարբեր հետևանքներին՝ տղաների ու աղջիկների համար:

### *Երեխաների մասնակցություն*

1. Երեխաներն իրավունք ունեն ազատորեն արտահայտվելու իրենց կյանքի վրա ազդող բոլոր հարցերի վերաբերյալ, և նրանց կարծիքին պետք է պատշաճ կշիռ տալ՝ կախված երեխայի տարիքից և հասունության աստիճանից<sup>6</sup>: Երեխայի մասնակցությունը մասնավորապես հանգեցնում է՝

ա. երեխաների սեփական կարծիքի՝ արտահայտմանն աջակցելուն և երեխայի կարծիքը հարգելուն և ուշադրության առնելուն՝ նրա վրա ազդող բոլոր իրավիճակներում,

բ. երեխային լաված լինելու հնարավորություն տալուն դատական, վարչական կամ արտադատական ամեն մի ընթացակարգում:

2. Երեխաները պետք է ակտիվորեն ներգրավված լինեն և իրենց զարգացման կարողություններին համապատասխան և իրազեկման վրա հիմնված իրենց համաձայնությամբ լիազորվեն իմաստալից կերպով մասնակցելու բռնությունը կանխարգելող քաղաքականությունների և ծրագրերի պլանավորմանը, իրագործմանն ու գնահատմանը: Պետությունը և այլ համապատասխան անձինք պետք է ուշադիր լսեն երեխաների կարծիքը՝ այն նպաստի լույսի ներքո, որ երեխաների տեսակետը կարող է բերել քննարկվող լուծումների որակին:

### *Պետության պարտավորություններ*

---

<sup>5</sup>Նշվ. աշխ. Հոդված 6:

<sup>6</sup>Նշվ. աշխ., Հոդված 12:

1. Պետությունը ունի գերագույն պատասխանատվություն՝ պահպանելու երեխայի իրավունքները և իր իրավասությունների սահմաններում պաշտպանելու բոլոր երեխաներին բռնության բոլոր ձևերից՝ որքան էլ դրանք թույլ լինեն, ամեն ժամանակ և ամենուրեք<sup>7</sup>: Պետությունները պետք է ներդրումներ անեն երեխայի բարձրագույն շահերով առաջնորդված և փաստերի վրա հիմնված քաղաքականությունների ու ծրագրերի մեջ՝ բռնություն հարուցող գործոններին անդրադառնալու և, երբ բռնությունը տեղի է ունենում, արդյունավետ կերպով արձագանքելու համար:

2. Ճանաչելով այն կենտրոնական դերը, որ խաղում են ընտանիքները երեխաների զարգացման ու բարօրության և նրանց իրավունքների պաշտպանության մեջ՝ ներառյալ բռնության բոլոր ձևերից պաշտպանվելու իրավունքը, պետությունը պետք է աջակցի ընտանիքներին երեխաների դաստիարակության նրանց դերում՝

ա. տրամադրելով երեխաների խնամքի մատչելի, ճկուն և որակյալ ծառայությունների ցանց<sup>8</sup>,

բ. դյուրացնելով ընտանիքի և աշխատանքային կյանքի դրական համաձայնեցումը,

գ. մշակելով ծնողական հմտությունների բարելավման և առողջ ու դրական ընտանեկան միջավայրի խրախուսման ծրագրեր<sup>9</sup>,

դ. ներառելով երեխաների իրավունքի հայեցակետ բյուջետային գործընթացների բոլոր մակարդակներում:

### *Այլ անձանց պարտավորություններ և մասնակցություն*

Երեխաների նկատմամբ բռնությունը կանխելու պատասխանատվությունը տարածվում է նաև բոլոր ծառայությունների, հաստատությունների և երեխաների համար ու նրանց հետ աշխատող մասնագետների, ծնողների և ընդլայնված ընտանիքի, լրատվամիջոցների, մասնավոր հատվածի, կրոնական համայնքների և քաղաքացիական հասարակության վրա:

### *Երեխայի բարձրագույն շահեր*

Երեխաներին առնչվող բոլոր գործողություններում, ներառյալ բռնության բոլոր ձևերից նրանց պաշտպանությունը, առաջին մտահոգությունը պետք է լինեն երեխաների *բարձրագույն շահերը*:

## **Գործունեական սկզբունքներ**

---

<sup>7</sup> Ն. տ., Հոդված 19:

<sup>8</sup> Հղել Երեխաների ցերեկային խնամքի մասին Նախարարների կոմիտեի Rec(2002)8 հանձնարարականին:

<sup>9</sup> Հղել Ծնողի դրական վարքագծին նպաստող քաղաքականության մասին Նախարարների կոմիտեի Rec(2006)19 հանձնարարականին:

1. Բռնությունը երեխաների նկատմամբ բազմակողմանի է: Այս մոտեցումը կանխենթադրում է, որ պետք է հանդես գա գործոնների մի համակցություն բռնության պատահման, կրկնության կամ դադարման համար: Սա պահանջում է ամբողջական վերաբերմունք բռնության դեպքի հանգամանքներին՝ նրանց փոխկապվածության հիմքի վրա՝ չբաղվելով միայն մեկ պատճառով կամ հարաբերությամբ:

2. Բռնության կանխարգելումը պահանջում է միջհատվածական համագործակցություն և համաձայնեցում: Սա ներառում է մասնավորապես համաձայնեցում կենտրոնական կառավարական գերատեսչությունների միջև, շրջանների ու տարածքների միջև և կառավարության ու քաղաքացիական հասարակության միջև:

3. Բռնությունը երեխաների հանդեպ պահանջում է միասնական (համակարգված, ամբողջական մոտեցում): Այս մոտեցումը թույլ է տալիս տարբեր կարգի գործոններին (մշակութային, հոգեբանական, մանկավարժական, ֆիզիկական, հոգեկան, քաղաքական, սոցիալ-տնտեսական և այլն) վերաբերվել ընդհանուր պատճառների հիմքի վրա: Սա ենթադրում է, որ կանխարգելման և բռնությունից երեխաների պաշտպանության նպատակ ունեցող բոլոր ծրագրերն ու անձինք երեխայի իրավունքների սատարման լայն համատեքստում պետք է գործեն մի շարք ճյուղերի և հատվածների հետ միասին: Նույն ոգով՝ ուղենիշների հատվածները փոխկապակցված են և պետք է ընթերցվեն միմյանց հետ շաղկապված:

4. Շահագրգիռ կողմերի բազմամասնակցական մոտեցումը անհրաժեշտ է երեխաների նկատմամբ բռնությունների վերացման համար, քանի որ սա մի պատասխանատվություն է, որ տարածվում է պետության վերահսկման մարմիններից և ծառայություններից դուրս՝ ընդգրկելու համար հասարակության բոլոր անդամներին, ինչպես՝ պետական հաստատություններին, տեղական իշխանություններին, ոչ կառավարական կազմակերպություններին, մասնագետներին, լրատվամիջոցներին, ընտանիքներին և երեխաներին: Երեխաներին բռնությունից պաշտպանելու ծրագրերի և գործողությունների պլանավորման, իրագործման ու գնահատման մեջ առաջնությունը պետք է տալ՝

ա. ընտանիքների և պետության միջև գործընկերության կառուցմանը՝ հիմնված վստահության և տարբեր մշակույթների ու ավանդույթների հարգանքի վրա,

բ. ներգրավմանը իրական երկխոսության մեջ երեխաների հետ և երեխաների կարծիքի նկատմամբ հարգանքի մշակույթի աստիճանական ձևավորմանը՝ մասնավորապես նրանց տեղեկացնելով գործընթացի արդյունքների մասին և բացատրելով՝ ինչու են հաշվի առնվել նրանց կարծիքները:

### **3. Միասնական ազգային, տարածքային և տեղական գործունեություն**

**3.1. Միասնական ազգային ռազմավարություններ երեխաներին բռնությունից պաշտպանելու համար**

1. Միջճյուղային և համակարգված կառուցվածքը (այսուհետև՝ ռազմավարությունը), որ ներգրավված է պլանավորման ազգային գործընթացի մեջ, հիմնված է ՄԱԿԵԻՄ-ի վրա և միավորում է բոլոր շահագրգիռ կողմերին, ներկայացնում է երեխաների հանդեպ կատարված բռնության ամենաարդյունավետ արձագանքը, որ տևական է ժամանակի ընթացքում: Ռազմավարության հիմնական տարրը պետք է լինի արդյունավետ ու համակողմանի առաջնային, երկրորդային և երրորդային կանխարգելիչ միջոցառումների համալիրը<sup>10</sup>, որը երեխայակենտրոն, ընտանիքակիզակետային, բազմամասնակցական է և կողմնորոշված է երեխաների և ընտանիքների կարիքների բավարարմանը: Ռազմավարությունը պատք է պարունակի իրատեսական և ժամկետորոշված նպատակակետեր, սատարված լինի համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսներով, հիմնված լինի արդիական գիտական իմացության վրա (ըստ իր աշխատանքի ոլորտի) և պարբերաբար կատարելագործվի:

2. Ռազմավարությունը պետք է ապավինի միջհատվածական համագործակցությանը, որը ներառում է առողջապահության, կրթության և սոցիալական հատվածները, պլանավորման և բյուջետային հատկացումների համար պատասխանատու գործակալություններին, օրենքի կատարումն ապահովող իշխանություններին և արդարադատության համակարգը: Ազգային մակարդակում երեխաներին բռնությունից պաշտպանելու առաջնային պատասխանատվություն ունեցող գործակալությունը (որտեղ հնարավոր է և համաձայն ազգային կանոնակարգերի), պետք է ստանձնի համաձայնեցման և վերահսկման հիմնական դերը: Բազմաթիվ հատվածները լայն հիմքեր ունեցող գործողությունների մեջ ներառելու նրա կարողությունը վճռական է ռազմավարության տևական հաջողության համար:

3. Երեխայի իրավունքների խթանման և պաշտպանության հետ առնչվող բոլոր գործող անձինք, ինչպես՝ ազգային, տարածքային և տեղական իշխանությունները, ընտանիքները, մարդու իրավունքների անկախ հաստատությունները, երեխաների հետ և նրանց համար աշխատող մասնագետները, հետազոտողները, քաղաքացիական հասարակությունը և լրատվամիջոցները պետք է ներգրավված լինեն ռազմավարության նախագծման, իրագործման և գնահատման մեջ: Երեխաները ոչ միայն պետք է լսված լինեն, այլև իրազեկման վրա հիմնված իրենց համաձայնությամբ և իրենց զարգացման կարողություններին համապատասխան՝ լիազորված լինեն նպաստելու շահագրգիռ կողմերի այս

---

<sup>10</sup> Լայն հասարակությանն ուղղված կանխարգելիչ աշխատանքը դիտվում է որպես առաջնային կանխում: Այն կանխում է բռնությունը՝ դիմելով լայն խնդիրների, ինչպես՝ առողջապահությանը կամ կրթությանը, և նվազեցնում է վտանգի գործոնները, ինչպիսիք են գործազրկությունը և սոցիալական մեկուսացումը: Երեխաները, որոնք բռնության էթարկվելու կամ ուրիշներին բռնության էթարկելու մեծ վտանգի մեջ են, երկրորդային կանխարգելման թիրախն են: Դրա օրինակները ներառում են միջոցառումներ թմրանյութեր և ալկոհոլ չարաշահող երեխաների համար և այլն: Երրորդային կանխումը փորձում է կանխել, վերացնել կամ սահմանափակել արդեն կատարված բռնության հետևանքները: Այն կենտրոնանում է բռնության զոհերի և կատարողների վերականգնման և վերաներգրավման վրա:

բազմամասնակցական գործողությանը: Պետք է հասանելի դարձնել համապատասխան ռեսուրսներ՝ ապահովելու համար երեխաների իմաստալից մասնակցությունը:

4. Պետք է մշակել մեթոդաբանություն՝ գնահատելու առաջընթացը և արժևորելու ռազմավարության կողմից նախատեսված գործողությունները բոլոր մակարդակներում՝ ներառյալ միջհատվածական մակարդակը: Գնահատումները պետք է կատարվեն կանոնավոր կերպով՝ որոշելու համար այն քաղաքականություններն ու միջոցառումները, որոնք համարժեք և արդյունավետ են բռնությունը կանխելու և դրա դեմ ուղղվելու տեսակետից:

5. Պետք է լայնորեն տարածել տեղեկատվությունը ռազմավարության իրագործման մասին:

Բռնությունը կանխող և դրա դեմ ուղղված գործողությունների տեսանկյունից պետք է մեծացնել, ի թիվս այլոց, ազգային, տարածքային և տեղական մակարդակով ներկայացուցիչների համաժողովներում դրանք քննարկելու միջոցով:

### **3.2. Տարածքային և տեղական գործունեություն**

1. Բռնությունը կանխելու տեղական գործունեությունը առանձնապես կարևոր է երեխաներին և ընտանիքներին՝ որպես ծառայությունների վերջնական ստացողներին, մոտ լինելու տեսակետից: Այս մակարդակում է, որ առնչվող անձինք օգնություն կստանան իրենց կարիքներին և հատկանիշներին համապատասխան:

2. Եթե ազգային իշխանությունները առաջադրում են ծառայությունների մատուցման ընդհանուր չափորոշիչներ, ապա տարածքային և տեղական իշխանությունների պարտավորությունն է հետևել այդ չափորոշիչներին և տրամադրել երեխաներին նպաստող ծառայությունների ցանց ու մեխանիզմներ: Տարածքային և տեղական իշխանությունների պատասխանատվությունները ներառում են նաև երեխաների նկատմամբ բռնության փաստերի հավաքումը, միջոցառումների մշակումը, իրագործումն ու վերահսկումը, ֆինանսավորումն ու տարածքների բաշխումը և այլն:

3. Ազգային և տեղական իշխանությունները պետք է համարժեք օժանդակություն մատուցեն բռնության կանխարգելման ծրագրերին՝ ֆինանսավորման, վարժեցման, գնահատման և հետագա կատարման առումով: Համագործակցությունն ու համաձայնեցումը այս մակարդակների միջև անհրաժեշտ են ծառայությունների մատուցման մշտական բարելավման և ռեսուրսների ամենաբարենպաստ օգտագործման համար:

4. Պետք է աջակցել երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման համար համայնքի միջամտություններին՝ ներգրավելով բոլոր հատվածներն ու շահագրգիռ կողմերին: Այդպիսի միջամտությունները կարող են իրականացվել բաց ծրագրերի, խորհուրդների կամ ցանցերի միջոցով, որոնք միավորում են, օրինակ՝ տեղական իշխանություններին, սոցիալական կամ առողջապահական ծառայություններին, դպրոցներին, տեղական

դատական մարմիններին, ոստիկանությանը, ներգաղթաձևների կամ համայնքային միություններին, կրոնական կազմակերպություններին և երեխաներին ու ընտանիքներին<sup>11</sup>:

5. Պետք է ուժեղացնել համագործակցությունն ու համաձայնեցումը տեղական իշխանությունների (և տարածքների) միջև՝ նաև փորձառության ու լավագույն գործելակերպի փոխանակման միջոցով:

6. Պետք է խթանել մասնավոր հատվածի և ոչ կառավարական կազմակերպությունների՝ համապատասխանորեն կարգավորվող և վերահսկվող ներգրավումը:

7. Քանի որ սոցիալական ծառայությունների լայնածավալ ապակենտրոնացումն ու մասնավորեցումը ներկայումս սովորական են եվրոպական երկրներում, պետք է ուշադիր գնահատել ռազմավարությունների իրականացմանը նպաստելու՝ տարածքային և տեղական իշխանությունների կարողությունը:

#### **4. Երեխայի իրավունքների հանդեպ հարգանքի մշակույթի ձևավորում**

Ռազմավարությունը որպես գլխավոր նպատակ պետք է ունենա երեխայի ու մանկության և երեխաների նկատմամբ բռնության ընկալման որակական փոփոխությունը: Այս նպատակին կարելի է հասնել միայն այն դեպքում, երբ հասարակության բոլոր հատվածները բավարար չափով տեղյակ կդառնան երեխայի իրավունքներին և երեխաների վրա բռնության վնասակար ազդեցությանը, երբ այս տեսակետից կուժեղացվեն կազմակերպչական մշակույթն ու գործունեությունը և կամուրջներ կձգվեն մասնագիտությունների միջև՝ երեխաներին ավելի շատ և ավելի լավ պաշտպանություն տրամադրելու համար, երբ կձևավորվի մտածելակերպը՝ այդ թվում տեղեկատվության և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով, երբ կանդրադառնան բռնության հետ կապ ունեցող հիմնական տնտեսական և սոցիալական պայմաններին, այլ խոսքով, դա հնարավոր կլինի միայն, երբ երեխայի իրավունքների հարգանքի իսկական մշակույթը կթափանցի հասարակության կառուցվածքի մեջ:

##### **4.1. Կրթություն և իրազեկման ավելացում**

1. Պետության պարտավորությունն է երեխայի իրավունքների մասին իրազեկումը հանրահայտ դարձնել հավասարապես մեծերին և երեխաներին՝ համապատասխան և գործուն միջոցներով<sup>12</sup>: Սա մասնավորապես ենթադրում է՝

ա. ներառել երեխայի իրավունքները դպրոցական դասընթացերում և մշակել «երեխայա-իրավունքային» մոտեցում կրթական բոլոր մակարդակներում,

բ. կանոնավոր և շարունակական վարժեցում երեխաների իրավունքների գծով բոլոր այն մարդկանց, ովքեր աշխատում են երեխաների հետ և նրանց համար:

<sup>11</sup> Հղել նաև «Դպրոցական բռնության կանխարգելումը. տեղական համագործակցության ձեռնարկ»-ին (Եվրոպայի խորհուրդ, 2005):

<sup>12</sup> Հոդված 42, ՄԱԿԵԻՄ:

գ. հանրային տեղակատվության և լրատվամիջոցների քարոզարշավների միջոցով իրազեկության բարձրացում երեխայի իրավունքների մասին՝ ներառյալ բռնության բոլոր ձևերից պաշտպանված լինելու իրավունքը, մարդկային արժանապատվությունը և ֆիզիկական անձեռնմխելիությունը հարգելու իրավունքը և լաված լինելու և լուրջ ընդունվելու իրավունքը:

2. Ամբողջ հասարակության մեջ պետք է սերմանել հստակ և աներկմիտ անհանդուրժողականություն երեխաների հանդեպ բռնության բոլոր ձևերի նկատմամբ, որքան էլ դրանք թույլ լինեն: Սոցիալական և մշակութային նորմերի և ավանդույթների վրա հենված հանրային դիրքորոշումները, որոնք ընդունում, սատարում կամ ներում են բռնությունը՝ ներառյալ կարծրատիպային գենդերային դերերը, ռասայական կամ էթնիկական խտրականությունը, մարմնական պատիժների հանդուրժումը, և այլ ավանդական վնասակար արարքները, պետք է հրապարակորեն պախարակվեն և վերացվեն: Պետք է լայնորեն հայտնի դարձնել վնասակար ազդեցությունը, որ թողնում են երեխաների վրա բռնության բոլոր ձևերը: Պետք է գորեղացնել բռնությունը դատապարտելու և կանխելու և գոհ դարձած երեխաներին օժանդակելու՝ պետության պարտավորությունների և անհատների պատասխանատվության գիտակցումը:

3. Ծնողների և խնամակալների գիտելիքները երեխայի իրավունքների և դրական ծնողական խնամածության մասին պետք է հարստացվեն բոլոր միջոցներով՝ ներառյալ դրական ծնողական խնամածության ծրագրերի մեջ նրանց ներգրավման խրախուսումը:

#### **4.2. Մասնագիտական վարժեցում**

1. Երեխաների հետ և նրանց համար աշխատող մասնագետների պատրաստումը կարևոր երկարաժամկետ ներդրում է երեխաների զարգացման և բարօրության գործում: Հետևաբար պետությունը և հասարակությունը պետք է գնահատեն այս մասնագիտությունները՝ նրանց հատկացելով անհրաժեշտ բարոյական, ֆինանսական և այլ հասարակական ու անհատական աջակցության միջոցներ:

2. Պետության պարտավորությունն է ներարկել երեխայի իրավունքների և երեխաների համար պատասխանատվության մշակույթը բոլոր մասնագետներին, որոնք շփման մեջ են մտնում երեխաների հետ իրենց աշխատանքի միջոցով (օրինակ՝ սոցիալական աշխատողները, որդեգրող խնամողները, ոստիկանները, դատավորները, ուսուցիչները, դպրոցների տնօրենները, երիտասարդության հետ աշխատողները, կալանավայրերում և երեխաների խնամքի հաստատություններում ծառայող մարդիկ, իմիգրացիոն և բարեգործական հիմնարկներում աշխատողները, սպորտային մարզիչները և այլն): Երեխայի իրավունքների մասին գիտելիքները խորացնելու համար պետք է մտցվեն համապատասխան դասընթացներ համալսարանական և այլ վերապատրաստական ծրագրերում:

3. Բոլոր համապատասխան մասնագետները, որոնք իրենց աշխատանքում շփման մեջ են մտնում երեխաների հետ, պետք է ծանոթ լինեն ՄԱԿԵԻՄ-ին և մեթոդաբանությանն ու մոտեցումներին, ներառյալ այնպիսիք, որ պահանջվում են երեխաներին արդյունավետ

կերպով լսելու համար, և վարժեցված լինեն աշխատելու բազմազան էթնիկական, մշակութային, կրոնական և լեզվական միջավայրերում:

4. Բոլոր համապատասխան մասնագետները պետք է հմտություն ունենան կանխելու, բացահայտելու և արդյունավետ կերպով արձագանքելու երեխաների հանդեպ կատարված բռնությանը: Այս նպատակով ազգային ուսումնական ծրագրերի հրահանգները պետք է ներառեն պարտադիր շարունակական վարժեցում երեխաների հանդեպ բռնության կանխարգելման, ճանաչման, գնահատման և զեկուցման, ինչպես և երեխաների պաշտպանության ու նրանց մշտական խնամքի ուղղությամբ: Վարժեցումը պետք է հետամուտ լինի բազմակողմանի մոտեցման և առաջնություն տա երեխաների բարօրության համար հնարավոր վտանգների վաղ հայտնաբերմանը:

5. Պետք է տրամադրել մասնագիտացված վարժեցումներ երեխաների խոցելի խմբերի, օրինակ՝ հաշմանդամ երեխաների հետ և նրանց համար աշխատող մասնագետներին<sup>13</sup>:

6. Նկատի ունենալով այն հաճախ դժվարին ֆիզիկական և հոգեբանական միջավայրը, որում գտնվում են բռնության ենթարկված երեխաներին օժանդակող ծառայությունները, պետք է նրանց աշխատակազմերին տրամադրել համարժեք աջակցություն՝ վերահսկողության, խորհրդատվության, լրացուցիչ վարժեցման և մասնագիտական հետաքրքրությունների խմբեր կազմելու հնարավորության առումով:

### **4.3. Լրատվամիջոցներ և տեղեկատվական հասարակություն**

1. Ազատ և անկախ լրատվամիջոցները, նրանց ինքնակարգավորման հանդեպ պատշաճ հարգանքի պայմաններում, կարող են հզոր դեր խաղալ երեխայի իրավունքների նկատմամբ հարգանքի մշակույթ կառուցելու մեջ և գործել որպես ռազմավարության իրագործման բնական գործընկերներ: Լրատվամիջոցներին պետք է քաջալերել երեխայի իրավունքների գծով թե՛ երեխաներին, թե՛ մեծերին կրթելու, երեխաների մասնակցությունը գովազդելու, դրական ծնողական խնամածության գործելակերպը խրախուսելու, միջմշակութային և միջկրոնական երկխոսությունը զորացնելու և հասարակության մեջ բռնությունը մերժող արժեքները սատարելու գործում<sup>14</sup>:

---

<sup>13</sup> Հղել Միավորված ազգերի կոնվենցիային հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին և Նախարարների կոմիտեի Rec(2006)5 հանձնարարականին՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և հանրային կյանքին լիակատար մասնակցության խթանմանն ուղղված՝ Եվրոպայի խորհրդի գործողությունների նախագծի վերաբերյալ. Հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակի բարելավումը Եվրոպայում (2006-2015 թթ):

<sup>14</sup> Հղել Նախարարների կոմիտեի № R (97) 19 հանձնարարականին՝ էլեկտրոնային լրատվամիջոցներում բռնության պատկերման մասին և Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 1466 (2000) հանձնարարականին՝ լրատվամիջոցներով կրթության մասին:

2. Պետությունը առաջնային պատասխանատվություն է կրում երեխաներին լրատվական վնասակար բովանդակությունից պաշտպանելու և տեղեկատվական ու հաղորդակցական միջավայրին երեխաների գործուն մասնակցությունը գովազդելու համար<sup>15</sup>:

3. Բռնության պատկերման և երեխաների համար հնարավոր վնասակարություն պարունակող բովանդակության տարածման առնչությամբ՝ լրատվամիջոցների համար պատասխանատուները պետք է լիովին ընդունեն իրենց պարտականություններն ու պատասխանատվությունները՝ թե ինչին կարող է հանգեցնել իրենց արտահայտման ազատության կիրառումը: Սա կարելի է անել անհամապատասխան նյութերը հանելով կամ մատչելիությունն արգելափակելով, կամ բովանդակության ավտոմատ գնահատման համակարգեր մշակելով, վարման կոդեր և բովանդակության գնահատման չափորոշիչներ ընդունելով, վերահսկող մեխանիզմներ հիմնելով և այլն<sup>16</sup>:

4. Ընդառաջելու համար մատչելի, ապահով և վստահելի համացանցային ծառայություններ ունենալու՝ երեխաների և ընտանիքների սպասելիքներին՝ պետք է խրախուսել համացանցային ծառայություններ մատուցողներին առցանց տեղեկատվություն մատակարարել իրենց հաճախորդների իրավունքների, ապահովության և մասնավոր կյանքի համար հնարավոր վտանգի մասին<sup>17</sup>: Պետք է ուժեղացնել համագործակցությունը օրենքը կիրառող իշխանությունների հետ՝ հեռահաղորդակցման տեխնոլոգիաների միջոցով կատարված հանցագործությունների հետաքննության գործում<sup>18</sup>:

5. Երեխաների իրավունքների և զգացմունքների վրա առցանց խաղերի թողած հնարավոր հետևանքների պայմաններում պետք է խրախուսել խաղերի ստեղծողներին և հրատարակողներին՝ պարբերաբար գնահատելու քաղաքականություններն ու գործունեությունը՝ երեխաների ապահովության տեսակետից<sup>19</sup>:

---

<sup>15</sup> Հղել Նախարարների կոմիտեի CM/Rec (2009)5 հանձնարարականին երեխաներին վնասակար բովանդակությունից ու վարքագծից պաշտպանելու և նոր տեղեկատվական ու հաղորդակցական միջավայրում նրանց գործուն մասնակցությունը խթանելու մասին և CM/Rec (2008)6 հանձնարարականին արտահայտվելու և լրատվության ազատության մասին՝ համացանցային ֆիլտրերը հաշվի առնելով, Նախարարների կոմիտեի 2008 հռչակագիրը համացանցում երեխաների արժանապատվությունը, ապահովությունը և մասնավոր կյանքը պաշտպանելու մասին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը՝ *Կ.Ս.-ն ընդդեմ Ֆինլանդիայի* գործում՝ դիմում № 2872/02 և *Պերրինը ընդդեմ Միացյալ թագավորության* գործում ընդունելիության որոշումը՝ դիմում № 5446/03:

<sup>16</sup> Հղել նաև Նախարարների կոմիտեի Rec(2001)8 Հանձնարարականին համացանցային բովանդակությանը վերաբերող ինքնակարգավորման մասին:

<sup>17</sup> Եվրոպայի խորհրդի Ուղենիշները տեղեկատվական հասարակության մեջ մարդու հիմնական իրավունքների և հիմնարար ազատությունների մասին համացանցային ծառայություններ մատուցողների գործնական ըմբռնմանը և համապատասխան կիրառմանը օժանդակելու վերաբերյալ՝ հատկապես նկատի ունենալով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը (2008):

<sup>18</sup> Մարդու իրավունքների եվրոպական դատարան, *Կ.Ս.-ն ընդդեմ Ֆինլանդիայի*, ն.տ.:

<sup>19</sup> Հղել Եվրոպայի խորհրդի Ուղենիշներին տեղեկատվական հասարակության մեջ մարդու հիմնական իրավունքների և հիմնարար ազատությունների մասին առցանց խաղեր մատակարարողների

6. Լրատվամիջոցներին պետք է խրախուսել համագործակցություն հիմնելու բոլոր համապատասխան գործող անձանց հետ հետևյալ նպատակներով՝

ա. զարգացնել երեխաների գրական հմտությունները լրատվամիջոցներում<sup>20</sup>,

բ. աշխատել երեխաների անվտանգության փորձագետների, քաղաքականություն վարողների, սոցիալական ծառայությունների և օրենքը կիրառող իշխանությունների հետ՝ նոր տեխնոլոգիաների կիրառումը զարգացնելու, միավորելու և վերահսկելու գործում՝ երեխաներին առցանց վնասից պաշտպանելու համար,

գ. խորացնել լրատվամիջոցների մասնագետների իմացությունը երեխաների իրավունքների և նրանց հանդեպ կատարվող բռնությունների մասին:

7. Ծնողները և ուսուցիչները հատուկ պատասխանատվություն ունեն այնքանով, որքանով դա վերաբերում է երեխաների մուտքին լրատվամիջոցներ և տանն ու դպրոցում դրանց օգտագործմանը: Նրանք կարող են ստանձնել այդ պատասխանատվությունը տարբեր ձևերով՝ ներառյալ լրատվամիջոցների գիտակցված և ընտրովի օգտագործումը, երեխաների քննադատական վերաբերմունքի խթանումը, մուտքի սահմանափակումը երեխաների ֆիզիկական, զգացմունքային կամ հոգեբանական բարեկեցության վրա ազդող նյութերին և այլն:

8. Մեծապես պետք է խրախուսել և աջակցել երեխաների միջոցով և երեխաների հետ լրատվամիջոցների հիմնադրմանը՝ բռնության վերացումը ներառող նպատակներով:

## 5. Կառուցվածքներ

### 5.1. Իրավական կառուցվածք

*Համապատասխանությունը ՄԱԿԵԻՄ-ին և միջազգային մյուս չափորոշիչներին*

1. Եվրոպայի Խորհրդի բոլոր անդամ երկրները ՄԱԿԵԻՄ-ի կողմեր են և պարտավորված են իրագործելու նրա դրույթները և գործելու նրա սկզբունքներին համապատասխան: ՄԱԿԵԻՄ-ի օբյեկտի և նպատակների հետ անհամատեղելի բոլոր վերապահումները պետք է մերժվեն:

2. Համընդհանուր և տեղական մակարդակով բազմաթիվ փաստաթղթեր են ընդունվել երեխայի իրավունքները պահպանելու և բռնության բազմազան ձևերից երեխաներին պաշտ-

---

գործնական ըմբռնմանը և համապատասխան կիրառմանը օժանդակելու վերաբերյալ՝ հատկապես նկատի ունենալով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը (2008):

<sup>20</sup> Հղել Նախարարների կոմիտեի Rec(2006)12 հանձնարարականին՝ նոր տեղեկատվական ու հաղորդակցական միջավայրում երեխաներին լիազորելու մասին:

պանելու համար<sup>21</sup>: Այս պայմանագրերին միանալը մեծապես պետք է քաջալերվի: Վավերացվելուց հետո դրանք պետք է արդյունավետ կերպով իրագործվեն ու վերահսկվեն և դրանց հետ պետք է համաձայնեցվեն ազգային օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, քաղաքականությունները, կանոնակարգերը, նախագծերն ու ծրագրերը:

### *Կանխարգելումը*

Ազգային օրենսդրական կառուցվածքը գործողություններ ձեռնարկելիս պետք է նախապատվություն տա բռնության կանխարգելմանը և երեխայի իրավունքների պաշտպանությանը, ինչպես՝

ա. ծնվելուց անմիջապես հետո երեխաներին գրանցել՝ որպես ազգային կարգավորումների և պետության պարտավորությունների սուբյեկտ՝ այս բնագավառում համապատասխան միջազգային պայմանագրերի համաձայն<sup>22</sup>,

բ. սահմանել ամուսնության նվազագույն տարիքը, որը շատ ցածր չպետք է լինի և պետք է վերաբերի թե՛ տղաներին, թե՛ աղջիկներին,

գ. սահմանել սեռական կապի նվազագույն տարիքը,

դ. արգելել երեխաների նկատմամբ բռնության, այդ թվում սեռական ոտնձգության համար դատապարտված անձանց աշխատանքը այնպիսի պաշտոններում, որտեղ նախատեսվում է երեխաների հսկողությունը,

ե. մշակել միջամտության ծրագրեր և միջոցառումներ՝ գնահատելու և կանխելու համար երեխաների նկատմամբ բռնություն կատարելու վտանգը,

զ. համակարգ մշակել լիակատար կերպով ստուգելու համար երեխաների հետ աշխատողների բոլոր կարողությունները, որոնք ապահովում են անհրաժեշտ հավասարակշռությունը երեխաների՝ բռնությունից պաշտպանվելու իրավունքի և մարդու բարի համբավի իրավունքի միջև<sup>23</sup>,

է. ազգային օրենքների մեջ ընդգրկել լաված լինելու՝ երեխայի իրավունքը հարգելու և երեխաների կարծիքին պատշաճ վերաբերմունք ցույց տալու պարտավորություն:

### *Բռնության արգելք*

---

<sup>21</sup> Հավելված III-ում տրվում է համապատասխան միջազգային պայմանագրերի ոչ լրիվ ցանկը: Հավելվածը IV-ը ներկայացնում է Եվրոպայի խորհրդի մարմինների (Նախարարների կոմիտեի, Տեղական և տարածաշրջանային իշխանությունների խորհրդարանական վեհաժողովի և կոնգրեսի) կողմից ընդունված հանձնարարականների ցանկը:

<sup>22</sup> Հղել ՄԱԿԵԻՄ-ի 7-րդ Հոդվածին:

<sup>23</sup> Հղել, օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, *Ուայտը ընդդեմ Շվեդիայի*, 2006, և *Լինդերը ընդդեմ Շվեդիայի*, 1987:

Պետությունն ունի որոշակի պարտավորություն՝ ապահովելու երեխաների պաշտպանության իրավունքը բռնության բոլոր, թեկուզ և թույլ ձևերից: Պետք է ձեռք առնվեն համապատասխան օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական միջոցներ՝ արգելելու համար բռնությունը երեխաների հանդեպ ամեն ժամանակ և ամենուրեք, և պաշտպանություն ցույց տալ պետության իրավասության սահմաններում գտվող բոլոր երեխաներին: Պետք է վերացնել բռնության որևէ ձևի պաշտպանությունը կամ արտոնումը, այդ թվում՝ ուղղիչ, կարգապահական կամ պատժական նպատակներով, ընտանիքներում կամ դրանցից դուրս<sup>24</sup>: Արգելքը պետք է անպայմանորեն տարածվի՝

ա. սեռական բռնության և շահագործման բոլոր ձևերի, սեռական նպատակներով երեխաների կոռուպցիայի և միջնորդության վրա,

բ. երեխաների շահագործման բոլոր ձևերի, այդ թվում՝ մանկական մարմնավաճառության, մանկական պոռնոգրաֆիայի, ճանապարհորդության և տուրիզմի ժամանակ սեռական շահագործման, թրաֆիկինգի, երեխաների վաճառքի, ապօրինի որդեգրության, ստիպողական աշխատանքի կամ ծառայությունների, ստրկության և դրա նման գործողությունների, որևէ նպատակով կամ որևէ ձևով օրգանների հեռացման վրա<sup>25</sup>,

գ. նոր տեխնոլոգիաների միջոցով երեխաների շահագործման բոլոր ձևերի վրա,

դ. բոլոր վնասակար ավանդական կամ սովորութական գործողությունների վրա, ինչպես՝ վաղաժամ բռնի ամուսնությունը, պատվի համար սպանելը, կամ իգական սեռական անդամների խեղումը,

ե. երեխաներին բռնություն պարունակող կամ վնասակար բովանդակության ենթարկելու վրա, անկախ դրա ծագումից և միջոցից,

զ. փակ հաստատություններում բռնության բոլոր ձևերի վրա<sup>26</sup>,

է. դպրոցներում բռնության բոլոր ձևերի վրա,

---

<sup>24</sup> Հղել՝ Մարդու իրավունքների Եվրոպական հանձնաժողով, թույլատրելիության որոշումը՝ *Յոթ անձ ընդդեմ Շվեդիայի*, 1982, դիմում № 8811/79. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, *Թայրերը ընդդեմ Միացյալ Թագավորության*, 1978, *Քեմպբելը և Կոսանսը ընդդեմ Միացյալ Թագավորության*, 1982, Ա-ն ընդդեմ *Միացյալ Թագավորության*, 1998, ընդունելիության որոշումը՝ *Ֆիլիպ Ուիլյամսոնը և ուրիշներ ընդդեմ Միացյալ Թագավորության*, 2000, դիմում № 55211/00:

<sup>25</sup> Հղել նաև Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի գործողությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիային (CETS № 197 2005/2008), Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիային (CETS № 201), ՄԱԿԵԻՄ-ի 32-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ հոդվածներին և Պալերմոյի արձանագրությանը, ինչպես նաև Աշխատանքի կամ ծառայության ընդունման նվազագույն տարիքի մասին Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիային (ILO C. 138) և Մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի արգելքի և վերացման համար անհապաղ գործողությունների մասին կոնվենցիան (ILO C. 182):

<sup>26</sup> Հղել Փակ հաստատություններում ապրող երեխաների իրավունքների մասին Նախարարների կոմիտեի CM/Rec(2005)5 հանձնարարականին:

ը. մարմնական բոլոր պատիժների վրա և երեխաների նկատմամբ բոլոր այլ դաժան, անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի վրա՝ ֆիզիկական, թե հոգեբանական<sup>27</sup>,

թ. ընտանիքում և տանը երեխաներին բռնության ենթարկելու վրա:

### *Իրավաբանական անձանց դերը*

Պետք է ձեռք առնվեն օրենսդրական կամ այլ միջոցառումներ ապահովելու համար, որ իրավաբանական անձինք պատասխանատու լինեն իրավախախտման համար՝ սահմանված Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (CETS № 201) 26-րդ հոդվածին համապատասխան:

### *Պատժամիջոցներ և միջոցառումներ*

1. Երեխաների հանդեպ բռնի, այդ թվում՝ սեռական հանցանքները պետք է պատժելի լինեն արդյունավետ համարժեք և կանխարգելող պատժամիջոցներով ու միջոցառումներով՝ հաշվի առնելով հանցանքի լրջությունը<sup>28</sup>:

2. Երեխաների հանդեպ բռնության, այդ թվում՝ սեռական իրավախախտումների համար դատապարտվածներին, ինչպես նաև քրեական դատաքննության ենթականերին պետք է հասանելիություն տրամադրել արդյունավետ միջամտության ծրագրերին՝ հանցանքի կրկնության վտանգը կանխելու կամ նվազագույնին հասցնելու նպատակով<sup>29</sup>:

3. Սոցիալական միավորման ու կրթության և հանցանքի կրկնության կանխարգելման սկզբունքների համաձայն՝ բռնություն կատարած երեխաների հետ առնչվող յուրաքանչյուր արդարադատական համակարգ պետք է միավորվի ավելի լայն սոցիալական նախաձեռնությունների հետ, որոնք նպատակ ունեն ապահովելու ամբողջական մոտեցումը և խնամքի շարունակականությունը այդպիսի երեխաների նկատմամբ (համայնքի միջամտության և շարունակական խնամքի սկզբունք)<sup>30</sup>:

4. Իր հիմնական սկզբունքների համաձայն՝ ազգային իրավական համակարգը պետք է հնարավորություն ընձեռի տույժերի չենթարկելու բռնությունից տուժած երեխաներին անօրինական գործունեության մեջ նրանց ներքաշվելու համար, այն չափով, որքանով նրանք հարկադրված են եղել այդպես անել:

<sup>27</sup> Տե՛ս տողատակ 22. հղել նաև՝ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե, Ընդհանուր դիտումներ ըստ 7-րդ (կետ 10) և 17-րդ հոդվածներ, *Եզրակացություն XV-2*, հատ. 1, Ընդհանուր ներածություն, էջ 26:

<sup>28</sup> Տե՛ս, օրինակ՝ Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 27-րդ հոդվածը:

<sup>29</sup> Տե՛ս, օրինակ՝ նշվ. աշխ., Հոդվածներ 15-րդ, 16-րդ և 17-րդ :

<sup>30</sup> Հղել Նախարարների կոմիտեի CM/Rec(2008)11 Հանձնարարականին՝ պատժամիջոցների և միջոցառումների ենթակա դեռահաս օրինախախտների համար եվրոպական կանոնների մասին:

## *Ծանրացուցիչ հանգամանքներ*

Պատիժը որոշելիս՝ երեխաների հանդեպ բռնություն գործադրելը պետք է հաշվի առնվի որպես ծանրացուցիչ հանգամանք: Հաշվի առնվելիք մյուս հանգամանքների մեջ, այնքանով, որքանով դրանք արդեն իսկ հանցանքի բաղադրիչների մաս չեն կազմում, պետք է ներառվեն վստահության դիրքի, երեխայի վրա ունեցած հեղինակության կամ ազդեցության, տնտեսական կամ այլ կարգի կախվածության վրա հիմնված հարաբերությունների չարաշահումը և հանցագործ կազմակերպության մեջ ներքաշված լինելը<sup>31</sup>:

## *Արդարադատություն*

1. Պետք է ձեռնարկվեն անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ արդարադատություն սահմանելու համար բռնի, այդ թվում սեռական իրավախախտումների վերաբերյալ այն երեխաների հանդեպ, որոնք պետության քաղաքացի են կամ ունեն իրենց բնակության վայրը պետության տարածքում:

2. Միջազգային պայմանագրերի պահանջների համաձայն պետք է ձեռնարկվեն անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ արդարադատություն սահմանելու համար բռնի, այդ թվում սեռական իրավախախտումների վերաբերյալ այն երեխաների հանդեպ, որոնք բռնության են ենթարկվել արտասահմանում պետության քաղաքացիների կամ պետության տարածքում բնակության վայր ունեցող անձանց կողմից<sup>32</sup>: Ապահովելու համար արդյունավետ արտատարածքային արդարադատությունը, իրավախախտների հետապնդումը և պատժամիջոցների նշանակումը, պետք է վերացնել երկակի հանցագործության պահանջները և հեշտացվի փոխադարձ իրավական օժանդակությունը:

## *Վաղեմության ժամկետի դրույթը*

Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 33-րդ հոդվածով սահմանված՝ հանցանքների վերաբերյալ վաղեմության ժամկետի դրույթը պետք է գործի այնքան ժամանակ, որը բավարար է թույլ տալու համար սկսել արդյունավետ դատաքննություն գոհ դարձած երեխայի չափահասության տարիքին հասնելուց հետո և որը համապատասխանում է քննվող հանցանքի ծանրությանը:

## *Գործադրումը*

Երեխայի իրավունքները պահպանող և երեխաներին բռնության բոլոր ձևերից պաշտպանող օրենսդրությունը պետք է ամբողջությամբ և պատշաճորեն գործադրվի: Այդ արդյունքին հասնելու համար այն պետք է սատարվի համապատասխան հաստատություններով, այդ թվում՝ երեխաների իրավունքների ազգային անկախ հաստատություններով և անկախ

<sup>31</sup> Հղել նաև Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 28-րդ հոդվածին:

<sup>32</sup> Հղել նշվ. աշխ. Հոդված 25-րդ:

վերահսկման մեխանիզմներով, մարդկային և ֆինանսական ռեսուրսներով և ուղեկցվի բոլոր համապատասխան հատվածների և մասնագետների ղեկավարումով<sup>33</sup>:

## 5.2. Քաղաքականության կառուցվածք

### *Երեխայի իրավունքների ազգային քաղաքականությունը*

1. Երեխայի իրավունքների ազգային քաղաքականության գոյությունը վճռական է բռնության բոլոր ձևերից երեխայի պաշտպանվածության իրավունքի իրականացման համար: Այդպիսի քաղաքականությունը նախաձեռնում, առաջ է մղում և համաձայնեցնում է գործընթացները, որոնք նպատակ ունեն ապահովելու, որ ՄԱԿԵԻՄ-ի դրույթներն ու սկզբունքները թափանցեն կառավարության քաղաքականության բոլոր կողմերի և երեխաներին առնչվող բոլոր հանրային գործողությունների մեջ:

2. Երեխաների բարօրությանը վերաբերող ազգային բոլոր քաղաքականությունները (սոցիալական քաղաքականությունը, առողջապահական քաղաքականությունը, կրթական քաղաքականությունը, բնակարանային քաղաքականությունը և այլն) պետք է նպաստեն երեխայի իրավունքների խթանմանն ու պաշտպանությանը: Առաջնությունը պետք է տրվի անհավասարությունը, աղքատությունը և մեկուսացումը մեղմացնող, ընտանիքներին աջակցող, գործազրկության ու եկամուտների տարբերության դեմ ուղղված, բռնություններող ու տևական դարձնող՝ սոցիալական հանդուրժողականության, հավատքների և արժեքների դեմ ուղղված, սոցիալական ցանցերը բարելավող, ներգաղթողների և նրանց ընտանիքների սոցիալական ներգրավումը հեշտացնող քաղաքականությանը: Համապատասխան բնագավառներում զարգացվող քաղաքականությունն ու միջոցառումները պետք է պատշաճորեն համաձայնեցվեն, և նրանց արդյունքները պետք է փոխադարձաբար միմյանց համալրեն:

3. Պետք է զարգացնել հետազոտության, փաստերի և երեխաների սեփական փորձառության վրա հիմնված քաղաքականություն՝ երեխաների դեմ ուղղված բռնությունը կանխելու, բացահայտելու և դրան արձագանքելու համար: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել խոցելի խմբերի պաշտպանությանը, ինչպիսիք են՝ հաշմանդամություն ունեցող երեխաները<sup>34</sup>, պետության խնամքի տակ գտնվող կամ գտնված երեխաները<sup>35</sup>, որդեգրված երեխաները, երեխաները, որոնցից հրաժարվել են<sup>36</sup>, անտերունչ և միայնակ երեխաները<sup>37</sup>,

---

<sup>33</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, ներառյալ *Ս-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, 1998, և *Զ-ն և ուրիշները ընդդեմ Միացյալ Թագավորության*, 2001, որը պահանջում է երկրներից ապահովել երեխաների համապատասխան օրենսդրական պաշտպանությունը անմարդկային և ստորացուցիչ վերաբերմունքից՝ հակառակ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի:

<sup>34</sup> Հղել վերը մեջբերված Rec(2006)5 հանձնարարականին և *Հաշմանդամություն ունեցող չափահասների և երեխաների պաշտպանությունը բռնությունից* փաստաթղթին, Եվրոպայի խորհուրդ, 2003:

<sup>35</sup> Հղել վերը մեջբերված Rec(2005)5 հանձնարարականին:

<sup>36</sup> Հղել Խորհրդարանական վեհաժողովի 1601 (2003) հանձնարարականին լքված երեխաների վիճակը հաստատություններում բարելավելու մասին:

փախստական և ապաստան փնտրող երեխաները<sup>38</sup>, փոքրամասնություններին պատկանող երեխաները, փողոցում աշխատող և/կամ փողոցում ապրող երեխաները<sup>39</sup>, ծայրահեղ աղքատության մեջ և անբարենպաստ կամ առանձնացված տարածքում ապրող երեխաները<sup>40</sup>, զինված բախման կամ վթարի վիճակում հայտնված երեխաները<sup>41</sup>, ձերբակալված կամ օրենքի հետ բախում ունեցող երեխաները<sup>42</sup> և այլն:

*Երեխաներին և ընտանիքներին առնչվող քաղաքականությունները*

1. Երեխաներին և ընտանիքներին առնչվող քաղաքականությունների ընդհանուր նպատակը պետք է լինի՝

ա. աջակցել ընտանիքներին նրանց երեխայախնամ պատասխանատվությունների մեջ,

բ. ըստ հնարավորին կանխել երեխաների անջատումը իրենց ընտանիքներից,

գ. ընտանիքանման և համայնքի վրա հիմնված այլընտրանքների համար նախատեսել երեխաների տեղավորումը երեխաների բարձրագույն շահերին համապատասխան հաստատություններում և

դ. բաժանման դեպքերում և, երբ հարմար է, ապահովել շփումը երեխաների և նրանց ծնողների միջև՝ նպաստելու համար ընտանիքների վերամիավորմանը, որտեղ այդ բխում է երեխայի բարձրագույն շահերից:

2. Երեխաների խնամքի դրական և ոչ բռնի ձևերի սատարումը պետք է կենտրոնական լինի երեխաներին և ընտանիքներին առնչվող քաղաքականությունների համար: Դրական ծնողական խնամաձուրթումը վերաբերում է այն ծնողի վարքագծին, որը հարգում է երեխայի իրավունքները և երեխաների բարձրագույն շահերը, մեծացնում, զորացնում, առաջնորդում է երեխային և ընդունում է երեխաներին որպես սեփական իրավունք ունեցող անհատների: Դրական ծնողական խնամաձուրթումը ամենաթող չէ, այլ սահման է դնում, որ երեխաները պետք է օգնեն նրանց լիովին զարգացնելու իրենց հնարավորությունները<sup>43</sup>:

---

<sup>37</sup> Հղել Նախարարների կոմիտեի CMRec(2008)4 հանձնարարականին՝ տարաբնակների և անցյալում ներգաղթածների երեխաների ներգրավումը ուժեղացելու մասին, և CMRec(2007)9 հանձնարարականին՝ անտերուհի տարագիր անչափահասների կյանքի ծրագրերի մասին:

<sup>38</sup> Հղել նաև Խորհրդարանական վեհաժողովի 1703 (2005) հանձնարարականին՝ միայնակ և ապաստան փնտրող երեխաներին պաշտպանելու և օժանդակելու մասին:

<sup>39</sup> Հղել Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի 253 (2008) հանձնարարականին՝ փողոցում ապրող և/կամ աշխատող երեխաների սոցիալական վերաներգրավման մասին:

<sup>40</sup> Հղել «Երիտասարդությունը և վտարումը դեպի անբարենպաստ քաղաքային տարածքները. անդրադարձ բռնության պատճառներին» (Եվրոպայի խորհրդի հրատարակություն, *Սոցիալական համախմբման միտումներ*, № 8):

<sup>41</sup> Հղել նաև Խորհրդարանական վեհաժողովի 1561 (2002) հանձնարարականին՝ Հարավարևելյան Եվրոպայի պատերազմական երեխաների համար սոցիալական միջոցառումների մասին, և դրա 1587 (2007) Եզրակացությանը՝ Բալկանների հետհակամարտային գոտիներում բնակվող երեխաների վիճակի մասին:

<sup>42</sup> Վերը մեջբերված՝ CMRec(2008)11 հանձնարարականը:

<sup>43</sup> Հղել վերը մեջբերված Rec(2006)19 հանձնարարականին:

3. Փակ հաստատություններում տարվող խնամքը պետք է օգտագործվի միայն երեխայի բարձրագույն շահերի համար՝ որպես վերջին ծայրահեղ միջոց, ըստ հնարավորին կարճ ժամկետով, և որպես առաջնային նպատակ ունենա երեխայի հաջող ներգրավումը և/կամ վերաներգրավումը հասարակության մեջ<sup>44</sup>: Երեխաները կարող են տեղավորվել փակ հաստատություններում միայն բավարարելու համար հրամայական համարված կարիքները՝ բազմակողմանի գնահատման հիման վրա:

### 5.3. Սահմանակարգային կառուցվածք

1. Ռազմավարության իրագործման համար պահանջվող կենսունակ սահմանակարգային կառուցվածքը պետք է բաղկացած լինի հետևյալ հիմնական տարրերից՝

ա. ազգային մակարդակով գործակալություն (որտեղ դա հնարավոր է, և համաձայն ազգային կանոնակարգերի)՝ օժտված երեխաներին բռնությունից պաշտպանելու առաջնային պատասխանատվությամբ: Այս մարմինը պետք է կատարի հիմնական համաձայնեցնող և վերահսկող գործառույթը, քանի որ ռազմավարության իրագործումը շահագրգռված է և երեխաների դեմ բռնության դեպքերում ստանձնում է ընդհանուր պատասխանատվությունը:

բ. երեխաների պաշտպանությանը նպաստող յուրաքանչյուր հաստատություն պետք է ունենա ռազմավարության ավելի լայն նպատակների հետ համատեղելի հստակ սահմանված դեր: Հաստատության հանձնագրերը (մանդատ) պետք է ունենան հստակ պարտավորություն համագործակցելու համաձայնեցնող գործակալության հետ և բոլոր այլ հաստատությունների և անձանց հետ՝ ներառյալ քաղաքացիական հասարակությունը: Տարբեր հաստատությունների հանձնագրերը և նրանց անձնակազմերի աշխատանքի նկարագրությունները պետք է կապակցված լինեն:

գ. պետք է հիմնադրվի մարդու իրավունքների անկախ հաստատություն փարիզյան սկզբունքների համաձայն<sup>45</sup>՝ առաջ մղելու և պաշտպանելու երեխայի իրավունքները՝ հաստատված օրենսդրության միջոցով, կա՛մ անկախ, կա՛մ որպես կենտրոնական մաս մարդու իրավունքների որևէ գոյություն ունեցող հաստատության մեջ: Այս հաստատությանը պետք է տրվեն այնպիսի իրավունքներ, որոնք անհրաժեշտ են նրան հնարավորություն ընձեռելու՝ կիրառել իր հանձնագրերը արդյունավետ և անկախ կերպով՝ ներառյալ լսելու յուրաքանչյուր անձի, ձեռք բերելու ցանկացած տեղեկատվություն և/կամ փաստաթուղթ, որ անհրաժեշտ է իրենց իրավասության տակ ընկնող իրադրությունը գնահատելու համար, ամեն ժամանակ մուտք ունենալու երեխաներին խնամող հիմնարկներ, առաջարկելու նախաձեռնություններ և միջոցառումներ, ներառյալ օրենսդրական միջոցները, վարել տեղյակությունը բարձրացնող քարոզարշավներ, տարածել երեխայի իրավունքների մասին տեղեկատվություն՝ հատկապես երեխաների մեջ, և վերահսկել կառավարության գործողությունները: Հաստատությունը պետք է ունենա համապատասխան ենթակառուցվածք, ֆինանսավորում (ներառյալ հատկապես

<sup>44</sup> Հղել ՄԱԿԵԻՄ-ի 9-րդ հոդվածին, ՄԱ Երեխաների այլընտրանքային խնամքի պատշաճ կիրառման և պայմանների համար ուղենիշների նախագծին և Rec(2005)5 հանձնարարականին:

<sup>45</sup> ՄԱ Գլխավոր ասամբլեայի 1993թ. դեկտեմբերի 20-ի 48/134 որոշումը:

երեխայի իրավունքների համար՝ բազմաքանակ հաստատությունների մեջ), աշխատակազմ և տարածքներ: Այն պետք է կապակցվի ռազմավարությունների կառուցվածքի, զարգացման և հետագա իրագործման հետ:

դ. որևէ մարմին, ինչպես՝ երեխայի իրավունքների դիտման կետ, ազգային վիճակագրական գրասենյակ կամ երեխաների հետ գործ ունեցող հետազոտական ինստիտուտ պետք է համաձայնեցնի բռնության փաստերի հավաքումը, վերլուծությունը, կարգավորումը և տարածումը և զարգացնի հետազոտումը՝ տեղեկացնելու համար ռազմավարության կառուցվածքին ու իրականացմանը:

ե. երեխաներին խնամք և ծառայություններ մատուցող բոլոր հաստատությունները պետք է լիազորված և գրանցված լինեն իրավասու հանրային իրավագործությամբ օրենսդրության համապատասխան և խնամքի նվազագույն ազգային չափորոշիչների հիման վրա: Պետք է հիմնվեն ներքին վերահսկողություն և անկախ մշտադիտարկման մեխանիզմներ՝ ապահովելու համար չափորոշիչների պահպանումը:

զ. պետք է խրախուսել երեխաների խնամքի և պաշտպանության համար պատասխանատու բոլոր հաստատություններին, ծառայություններին ու հիմնարկներին՝ որդեգրելու լավ դեկլարման վարքագիծ, որը ներառում է երեխաների հանդեպ բռնության բոլոր ձևերի արգելքը, կանխումը և մերժումը, և պատրաստ լինելու հավատարիմ մնալ այդ վարքագծին: Պետք է հաստատվեն աշխատանքի նկարագրության չափօրինակներ յուրաքանչյուր մասնագիտական կարգի համար: Դրանք պետք է պարունակեն երեխայի իրավունքները հարգելու և բռնության մասին իրավասու մարմիններին զեկուցելու պարտավորություն:

է. պետք է հաստատվեն անհրաժեշտ կապեր ազգային, տարածքային և տեղական մակարդակների միջև, և կառուցվի արդյունավետ գործընկերություն՝ հիմնված համապատասխան գործընկերային համաձայնությունների մեջ իրավասությունների հստակ բաժանման վրա:

ը. քաղաքացիական հասարակությունը պետք է դառնա սահմանակարգային կառուցվածքի անբաժան մասը, և մասնակիցները, ինչպես՝ մարդու իրավունքների հաստատությունները, մասնագետների ցանցերը, երեխաներն ու մանկական կազմակերպությունները, պետք է հրավիրվեն նպաստելու ռազմավարության նախագծմանը, ներդրմանը, զարգացմանը և հետագա կատարմանը:

## **6. Երեխաներին նպաստող ծառայություններ և մեխանիզմներ**

### **6.1. Ընդհանուր սկզբունքներ**

1. Երեխաների խնամքի, կրթության և պաշտպանության համար պատասխանատու հաստատությունների, ծառայությունների և հիմնարկների առաջնային նպատակը պետք է

լինի հնարավորինս առավելագույն աստիճանով ապահովել երեխաների գոյատևումը, զարգացումը և բարօրությունը<sup>46</sup>:

2. Բոլոր երեխաների համար պետք է մատչելի լինեն նրանց կարիքներին հարմարեցված որակյալ ծառայությունները: Պետք է լայնորեն քարոզվի բարեկեցություն, առողջապահություն, կրթական և հոգեբանական աջակցություն և ընտանիքների խորհրդատվություն պարունակող ծառայությունների բազմակողմանի չափօրինակների օգտագործումը: Այդ չափօրինակները պետք է հենվեն միջհատվածային կայուն համագործակցության, համապատասխան որակի աշխատակազմի, միասնական ծրագրի և իրագործման կենտրոնացված կառուցվածքի վրա:

3. Բռնության կանխարգելման, երեխաների պաշտպանության և տուժածների ապաքինման ծառայությունները պետք է մատչելի դարձվեն հատկապես տեղական մակարդակում: Պետք է միջգործակալական համաձայնագրերի և արձանագրությունների միջոցով հիմնվեն վստահելի ընթացակարգեր ու մեխանիզմներ՝ ներառյալ համապատասխան տեղեկատվության և լավագույն փորձի փոխանակումը:

## 6.2. Երեխայի խնամքի չափորոշիչները

1. Պետք է հիմնվեն երեխաների բարձրագույն շահերին և լիակատար զարգացմանն ուղղված չափորոշիչներ սահմանող կանոնակարգեր՝ երեխաների խնամքի, կրթության և պաշտպանության համար պատասխանատու բոլոր հաստատությունների, ծառայությունների և հիմնարկների համար<sup>47</sup>: Այդ չափորոշիչների պահպանումը պետք է ապահովվի անձնակազմի վարժեցմամբ, ներքին վերահսկողությամբ և պարբերական անկախ մշտադիտումով: Այդպիսի հաստատություններում երեխայի իրավունքների յուրաքանչյուր խախտում պետք է պատժվի համապատասխան և արդյունավետ ընթացակարգերի համաձայն:

2. Հատուկ պահանջներ պետք է ներկայացվեն անչափահասների արդարադատության համակարգին և սահմանակարգային խնամք տանող հիմնարկներին՝ վստահ լինելու համար, որ լիովին պաշտպանվում են երեխայի իրավունքները, երեխաները օգտվում են կյանքի լավ որակից և հնարավորություն ունեն մասնակից լինելու իրենց ընկերակիցների համար սովորական բոլոր զբաղմունքներին<sup>48</sup>:

<sup>46</sup> Հղել ՄԱԿԵԻՄ-ի 6-րդ հոդվածին:

<sup>47</sup> Հղել նաև ՄԱԿԵԻՄ-ի 3-րդ հոդվածին և վերը մեջբերված՝ Միավորված ազգերի ուղենիշներին երեխաների այլընտրանքային խնամքի վերաբերյալ և Rec(2002)8 հանձնարարականին:

<sup>48</sup> Հղել նաև Նախարարների կոմիտեի Rec(2003)20 հանձնարարականին անչափահասների իրավախախտումների նկատմամբ նոր վարվելակերպի և անչափահասների արդարադատության դերի մասին և վերը մեջբերված՝ Rec(2005)5 հանձնարարականին:

3. Պետք է հիմնվի համակարգ՝ ստուգելու երեխաների հետ շփման մեջ գտնվող բոլոր անձանց ամեն կարողություն, որն ապահովում է համապատասխան հավասարակշռություն բռնությունից երեխաների պաշտպանության իրավունքի և անհատի բարի համբավի իրավունքի միջև:

### **6.3. Անկախ մշտադիտում**

1. Երեխաների խնամքի, կրթության և պաշտպանության համար պատասխանատու բոլոր

հաստատությունները, ծառայությունները և հիմնարկները պետք է ենթակա լինեն անկախ մշտադիտման՝ հետևյալ նպատակով՝

ա. ընձեռել օրինական երաշխիքներ երեխաների և աշխատակազմի համար, որոնք լիովին պահպանվում են,

բ. ստուգել հանրային ծախսումների նպատակահարմարությունն ու ճշտությունը,

գ. տրամադրել խորհրդատվություն երեխաների բարեկեցությունն ապահովող օրենքների և կանոնների կատարման վերաբերյալ:

2. Մշտադիտումը պետք է կատարվի օրենքով սահմանված և հատուկ կերպով պատրաստված անձնակազմ ունեցող անկախ մարմնի կողմից:

### **6.4. Բռնությունների մասին զեկույցը**

1. Երեխաների իրավունքների վերաբերյալ կրթությունը և այն իմացությունն ու ըմբռնումը, թե ո՞ր իշխանություններին պետք է զեկույցել բռնության մասին, երկու էական պայմաններ են, որ հնարավորություն են տալիս երեխաներին և մեծերին ավելի լայն զեկույց տալու բռնության մասին: Իրապես արդյունավետ լինելու համար զեկույցման մեխանիզմը պետք է լինի երեխաներին նպաստող և մաս կազմի զեկույցման, քննարկման ու աջակցության ավելի լայն ծառայությունների: Այդ համակարգը պետք է հարգի երեխայի իրավունքները և երեխաներին (և որտեղ հարմար է, նրանց ընտանիքներին) մատուցի անհրաժեշտ պաշտպանություն, ներառյալ նրանց անձնական կյանքի պաշտպանությունը՝ առանց անհարկի ձգձգման:

2. Բռնության մասին զեկույցումը պետք է պարտադիր լինի երեխաների հետ և նրանց համար աշխատող բոլոր մասնագետների համար՝ ներառյալ պետության անունից առաջադրանքներ կատարող կազմակերպություններում և մասնավոր միավորումներում աշխատողներին: Որտեղ պարտադիր զեկույցումը արդեն գոյություն ունի, պետք է քննել և մշտական հսկողության տակ պահել, թե ինչ աստիճանով են տարբեր գործակալություններ կատարում զեկույցելու իրենց պարտավորությունները:

3. Խրախուսելու համար մասնագետների կողմից ավելի լայն զեկուցումը՝ պետք է մտցվեն օրենսդրական փոփոխություններ՝

ա. պաշտպանելու համար զեկուցողներին կամ գանգատ ներկայացնողներին բռնության վտանգը գնահատելիս հասկանալի սխալների համար պատասխանատվություն կրելուց,

բ. վերացնելու համար գանգատ ներկայացնելիս ծնողների կամ խնամողների համաձայնությունը ստանալու պահանջը,

գ. ապահովելու համար, որ գաղտնիության նորմերը չեն խոչընդոտի զեկուցմանը, եթե երեխան համաձայնում է կամ հասկանալու անկարող է ճանաչվում, և եթե մասնագետները կարծում են, որ զեկուցումը կամ քննարկումը նպաստում է երեխայի բարձրագույն շահերին:

4. Երեխաներին և նրանց ընտանիքներին պետք է մատչելի լինի տեղեկատվությունը, ընդ որում՝ երեխաներին հասկանալի ձևով, թե ո՞ր արարքներն ու գործողություններն են բռնություն կազմում, օրինակ՝ դպրոցներում վախեցնելն ու խմբական ճնշումը, և թե ում և ինչպես պետք է զեկուցել այդ դեպքերի մասին: Երեխան պետք է կարողանա զեկույց ներկայացնել առանց իր ծնողի ու խնամողի համաձայնության:

5. Երեխաների խնամքի, կրթության և պաշտպանության համար պատասխանատու ամեն մի ծառայություն, հաստատություն կամ հիմնարկ պետք է ունենա երեխայի մասնավոր կյանքը հարգող, լավ ճանաչված և դյուրահաս ծառայություն, և պարտավոր լինի անհապաղ ու լիակատար ուսումնասիրել բռնության մեղադրանքները: Բոլոր երեխաները, ներառյալ օրինական հաստատությունում խնամքի տակ գտնվողները, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխաները<sup>49</sup>, նրանց ծնողները և խնամողները պետք է տեղեկացված լինեն գանգատարկման այդպիսի մեխանիզմների մասին: Ընթացակարգը պետք է թույլ տա աջակցող ծառայությունների արդյունավետ մատչելիություն՝ միաժամանակ կասեցնելով տուժած երեխայի նվաստացումը:

6. Պետք է երեխաներին հասանելի դարձնել անկախ, գաղտնապահ, լավ գովազդված, հեշտ հիշելի, անվճար հեռախոսային օգնության գիծ՝ գաղտնի և մասնագիտական խորհրդատվություն գտնելու համար:

7. Յուրաքանչյուր տարածքում պետք է հիմնվեն անհապաղ արձագանքի ծառայություններ բռնության զոհ դարձած երեխաների համար՝ ներառյալ սեռական շահագործումը, սեռական բռնությունը, վնասակար ավանդական գործողությունները տանը և ընտանիքում: Ծառայությունների հետ կապի մանրամասները պետք է հայտնի դարձնել երեխաներին, ընտանիքներին և երեխաների հետ շփվող այլ անձանց:

## 6.5. Գանգատարկման մեխանիզմները

---

<sup>49</sup> Ոչ միայն ֆիզիկական հաշմանդամություն, ինչպես՝ տեսողական տկարություն ունեցող երեխաները, այլև մտավոր անկարողություններ ունեցողները: Մտավոր թերություն ունեցողների համար «հեշտ կարդալու» հարմար ձևաչափի մասին տեղեկությունը տե՛ս՝ <http://www.osmhi.org/?page=139> կայքէջում:

1. Պետք է հստակ որոշվեն բռնության գոհ դարձած երեխաների գանգատարկման ընթացակարգերը և համագործակցության եղանակները գործակալությունների միջև (այսինքն՝ սոցիալական ծառայությունների, կրթության, առողջապահության, ոստիկանության, դատական իշխանությունների, կամավոր կամ մասնավոր գործակալությունների միջև): Այդ ընթացակարգերը պետք է ընդունվեն՝ հետևելով յուրաքանչյուր առանձին տուժածի յուրահատուկ հանգամանքների գնահատմանը՝ պատշաճ արժեք տալով նրա կարծիքին և, եթե դա բխում է երեխայի բարձրագույն շահերից, նաև նրա ծնողների կամ խնամողների կարծիքին:

2. Երեխաներին պետք է խրախուսել (ներառյալ անկախ փաստաբանության և աջակցող ծառայությունների նախատեսումը) խոսելու համապատասխան իշխանությունների հետ իրենց կրած բռնության մասին:

3. Տուժած երեխաներին պետք է օգնել անհապաղ, և տանը կամ ընտանիքում բռնության գոհ դարձած երեխաների համար պետք է հաստատվեն բռնությունից պաշտպանելու իրավասություն ունեցող խնամակալներ և տանը երեխաների ապրելու այլ պայմաններ:

## **6.6. Ապաքինում, վերականգնում և սոցիալական վերաներգրավում**

1. Պետությունը պետք է ձեռք առնի բոլոր համապատասխան միջոցները՝ բռնության գոհ կամ ակնաստես<sup>50</sup> դարձած երեխաներին և, ըստ կարիքի, նրանց ընտանիքներին ֆիզիկական և հոգեբանական ապաքինում և վերականգնում ընձեռելու համար: Այդպիսի ծառայությունները պետք է մատուցվեն առանց հապաղման և այնպիսի միջավայրում, որը կնպաստի երեխայի առողջությանը, պատվասիրությանն ու արժանապատվությանը:

2. Բռնություն գործած երեխաների ապաքինումն ու սոցիալական վերաներգրավման միջոցների կիրառումը պետք է հենվի երեխայի բարձրագույն շահերի վրա՝ սահմանափակված ըստ կատարած հանցանքի ծանրության (համարժեքության սկզբունք) և հաշվի առնելով տարիքը, ֆիզիկական և մտավոր բարվոք վիճակը, զարգացումը, ունակություններն ու անձնական հանգամանքները (անհատականացման սկզբունք), անհրաժեշտության դեպքում հավաստիանալով հոգեբանական, ֆիզիկական կամ սոցիալական հետազոտման զեկույցներով<sup>51</sup>:

3. Բռնության գոհ, ակնաստես կամ կատարող դարձած երեխաների ապաքինման, վերականգնման և սոցիալական վերաներգրավման համար պատասխանատու ծառայությունները պետք է գործեն բազմաճյուղային և բազմագործակալական մոտեցմամբ՝ դիտելով երեխային ընտանիքի, համայնքի և նրա մշակութային ակունքների ավելի լայն համատեքստում: Պատշաճ հավասարակշռություն պետք է գտնել հիմնական և հատուկ ծառայությունների, ինչպես նաև անհատական ու միջանձնական գործոններին ուղղված և հանրային ու սոցիալական կողմերի վրա կենտրոնացած ծրագրերի միջև:

<sup>50</sup> Հղել ՄԱԿԵԻՄ-ի 39-րդ հոդվածին և վերը մեջբերված՝ Rec(2003)20 հանձնարարականին:

<sup>51</sup> Հղել վերը մեջբերված Rec(2008)11 հանձնարարականին:

## 6.7. Արդարադատության համակարգը<sup>52</sup>

1. Դատական և արտադատական վարույթները պետք է կատարվեն ի նպաստ երեխայի բարձրագույն շահերի և երեխայի իրավունքների, այդ թվում՝ պաշտպանված լինելու իրավունքի լիակատար հարգանքով:

2. Պաշտպանելու համար երեխայի իրավունքները և երեխաների օրինական շահերը դատավարության ամբողջ ընթացքում՝ երեխաներին պետք է տրամադրել միջնորդություն, անվճար ու անկախ իրավական ծառայություններ, դատապաշտպան և օժանդակ ծառայություններ: Պետք է ջանքեր գործ դնել երաշխավորելու համար, որ հասանելի միջոցները լինեն արդյունավետ, և լինի դատական որոշումների ու վճիռների արդյունավետ կատարում:

3. Երեխաներին ներառող դատական և արտադատական վարույթները պետք է արագացվեն, համարվեն առաջնային և ավարտին հասցվեն առանց չարդարացված ձգձգման: Այս նպատակով պետք է խրախուսել ավելի խոր համագործակցություն և համաձայնեցում դատավարության բոլոր կողմերի միջև:

4. Դատական և արտադատական վարույթները պետք է հարգեն լսված լինելու երեխայի իրավունքը և պատշաճ արժեք տան նրա կարծիքին: Հնարավոր դարձնելու համար նրանց իմաստալից մասնակցությունը՝ երեխաները պետք է տեղեկացվեն իրենց ընթացակարգային իրավունքների մասին՝ նրանց տարիքը և հասունության մակարդակը հաշվի առնող ձևով և անկախ ներկայացուցչի աջակցությամբ:

5. Պետք է տրամադրել հատուկ պաշտպանություն, ընթացակարգեր և միջոցներ բռնության գոհ կամ ականատես դարձած երեխաներին աջակցելու համար, մասնավորեպես՝

ա. դատավարությունները չպետք է ծանրացնեն երեխայի ապրած ցնցումը: Որտեղ հարմար է, արդարադատության արձագանքին պետք է արագ հետևեն համապատասխան աջակցող ծառայություններ:

բ. երեխաների և նրանց ընտանիքների մասնավոր կյանքը պետք է պաշտպանվի դատավարության ամբողջ ընթացքում<sup>53</sup>: Որտեղ անհրժեշտ է, պետք է ձեռք առնվեն համապատասխան պաշտպանական միջոցներ՝ խուսափելու համար բռնության գոհ կամ ականատես դարձած երեխաների և նրանց ընտանիքների ահաբեկումից, վրեժի ենթարկելուց կամ կրկին բռնության գոհ դառնալուց:

6. Քրեական պատասխանատվության տարիքը պետք է սահմանվի օրենքով և որոշվի ըստ հարմարին բարձր, նկատի ունենալով երեխայի զարգացման հետ կապված գործոնները: Բռնություն կատարած երեխաների համար հատուցման և ճնշամիջոցների

---

<sup>52</sup> 2009թ. Երեխաներին նպաստող արդարադատության մի խումբ մասնագետներ (CJ-S-CH) նախագծել են Եվրոպայի խորհրդի ուղենիշներ երեխաներին նպաստող արդարադատության մասին: Ուղենիշները պետք է ընդունվեն 2010թ.՝ որպես Նախարարների կոմիտեի հանձնարարական:

<sup>53</sup> Հղել Մարդու իրավունքների եվրոպական դատարանին՝ *Վ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, 1999:

հասկացությունները պետք է տեղի տան վերականգնող և վերահաստատող արդարադատության նպատակներին՝ պատշաճ ուշադրությամբ արդյունավետ հանրային անվտանգությանը և մարդու համապատասխան իրավունքներին և տուժած երեխայի համար օրինական պաշտպանության միջոցներին<sup>54</sup>:

7. Պետք է սահմանվեն բռնություն կատարած երեխաների՝ փակ հաստատություններում պահելու այլընտրանքներ, ինչպես՝ օգնության, դեկավարման և վերահսկողության որոշում, խորհրդատվություն, փորձաշրջան, խնամակալություն և կրթական ու մասնագիտական վարժեցման ծրագրեր: Այդպիսի միջոցառումների ընդհանուր նպատակները պետք է լինեն երեխայի արդյունավետ սոցիալացումը և վերաներգրավումը ընտանիքի, համայնքի և հանրության մեջ:

8. Բռնություն կատարած երեխաները չպետք է ազատագրվեն այլ կերպ, քան եթե դա անհրաժեշտ է որպես վերջին ծայրահեղ միջոց՝ կիրառված նվազագույն ժամկետով և կատարվում է հատուկ կերպով կարգավորված տարածքներում: Կալանավորման պայմանները պետք է համապատասխանեն ՄԱԿԵԻՄ-ին և այլ համապատասխան չափորոշիչների և պետք է հաշվի առնեն երեխաների առանձնահատուկ կարիքները<sup>55</sup>: Կալանավորման որևէ ձևին ենթարկված երեխաները պետք է պահվեն մեծերից առանձին, եթե միայն դա չի դիտվում որպես նրա բարձրագույն շահերին հակասող<sup>56</sup>:

## 7. Հետազոտություն և փաստեր

1. Երեխաներին բռնությունից պաշտպանելու համար արդյունավետ ռազմավարություն սահմանելը կախված է ազգային, տարածքային և տեղական մակարդակներում փաստերի հասանելիությունից և պատշաճ վերլուծությունից: Ազգային հետազոտական օրակարգի ընդունումը ամենահարմար ուղին է նյութերի հավաքման, վերլուծության, տարածման և հետազոտության միասնական և համակարգված մոտեցում մշակելու համար: Այդ մոտեցումը ի թիվս այլոց, ենթադրում է՝

ա. երեխաների հանդեպ բռնության հիմնագծային ուսումնասիրություն՝ որպես ամեն մի ռազմավարական պլանավորման գործընթացի նախադրյալ,

բ. բարոյական և իրավական նորմերին համապատասխան հետազոտություն՝ ներառյալ հարցազրույցները երեխաների և առանձին՝ նրանց ծնողների կամ խնամողների հետ՝ գաղտնիության և վստահության պայմաններում՝ հաստատելու համար երեխաների կրած բռնության ըստ հնարավորին ճշգրիտ իրադարձությունը,

<sup>54</sup> Հղել վերը մեջբերված՝ CMRec(2008)11 հանձնարարականին:

<sup>55</sup> Հղել վերը մեջբերված՝ Rec(2006)2 և CMRec(2008)11 հանձնարարականներին:

<sup>56</sup> Նշվ. աշխ., հղել նաև ՄԱ Կանոններին ազատագրված անչափահասների պաշտպանության համար, ՄԱ Նվազագույն կանոններին խնամակալական միջոցառումների համար («Տոկիոյի կանոններ») և ՄԱ Նվազագույն չափորոշիչ կանոններին անչափահասների արդարադատության իրագործման համար («Պեկինի կանոններ»):

գ. բռնություն ծնող արմատների և դրա տարբեր ձևերի փոխկախվածության երկայնակի լայնածավալ հետազոտություն,

դ. ներդաշնակված մեթոդաբանության մշակում՝ ընդհանուր ցուցիչների ամբողջությամբ, որը թույլ կտա հայտնաբերել բռնության նկատմամբ խոցելի երեխաների խմբերը,

ե. համացանցի միջոցով երեխաների վտանգման ճշգրիտ բնույթի շարունակական հետազոտություն, և թե ինչպես են այդ վտանգները փոխվում ժամանակի ընթացքում, և ինչպես են մեղմացվում միջամտությունների օգնությամբ,

զ. պաշտպանական գործոնների՝ հատկապես երեխաների համար ճկուն մեխանիզմների հետազոտություն,

է. բռնություն կատարած մեծերի և երեխաների ուսումնասիրություն՝ մշակելու համար դրանք գնահատելու և ուղղելու չափանիշներ ու չափեզրեր,

ը. հետազոտություն՝ ինչն է նպաստում երեխաներին բռնությունից պաշտպանելուն և արձագանքման եղած միջոցները գնահատելուն՝ ներառյալ բռնությունը կանխող ծառայությունների ու ծրագրերի մեթոդաբանությունը՝ դրանք գնահատելու և արժևորելու և որակյալ չափանիշներ մշակելու համար,

թ. երեխաների հանդեպ բռնության սոցիալական ծախսերի մեծության ուսումնասիրություն:

#### *Վիճակագրական մշտադիտում*

ա. ազգային, տարածքային և տեղական մակարդակների բոլոր վայրերում երեխաների հանդեպ բռնության պարբերական վիճակագրական մշտադիտում՝ հաստատված մեթոդաբանության հիմքի վրա: Փաստերը պետք է բաժանվեն ըստ սեռի, տարիքի, բռնության ձևի, քաղաքային կամ գյուղական տնտեսության, ընտանիքի բնութագրերի, կրթության մակարդակի և սոցիալական ու էթնիկական ծագման,

բ. քանակական և որակական փաստերի հավաքում երեխաների հետ կապված դատաքնությունների տևողության և արդյունքների մասին՝ ներառյալ բռնությունից տուժած երեխաների համար տրամադրված պաշտպանական միջոցները:

#### *Ազգային տվյալների շտեմարանի հիմնում<sup>57</sup>*

ա. երեխաների ծննդյան ու մահվան մասին՝ ներառյալ երեխաների մահվան (կամ լուրջ վնասվածքների) քննության մեխանիզմները,

---

<sup>57</sup> Փաստերի պաշտպանության կանոնների համաձայն:

բ. Երեխաներին ընդունող, պահող կամ տեղափոխող հաստատությունների և այլընտրանքային խնամքի բոլոր ձևերի ու կալանման հիմնարկների մասին՝ ներառյալ այդ հաստատություններում երեխաների նկատմամբ բռնության բոլոր դեպքերի արձանագրումը:

գ. Երեխաների նկատմամբ բռնության համար դատապարտված անձանց մասին՝ ներառյալ նրանց գենետիկական բնութագիրը (ԴՆԹ)<sup>58</sup>:

### *Համաձայնեցում*

ա. որտեղ հնարավոր է, և ազգային հանգամանքներին համապատասխան՝ իշխանության մեկ մարմնի, ցանկալի է, երեխայի իրավունքների գծով վիճակագրական դիտարկման ազգային գրասենյակի կամ հետազոտական ինստիտուտի հիմնում՝ համաձայնեցնելու և երեխաների հետ կապված տեղեկատվությունը ազգով մեկ տարածելու և միջազգայնորեն փոխանակելու համար,

բ. երեխայի իրավունքների պաշտպանության դեր ունեցող բոլոր գործակալությունների կողմից ակտիվ նպաստ փաստերի հավաքման գործին:

2. Երեխաների համար և նրանց հետ աշխատող անձնակազմ հավաքագրող բոլոր հաստատություններին, ծառայություններին ու հիմնարկներին պետք է տրամադրել երեխաների նկատմամբ բռնության հանցանքի համար դատապարտված անձանց մասին փաստերի հեշտ, բայց պատշաճ կերպով վերահսկվող հասանելիություն:

3. Անձնական տվյալների մշակումը ազգային, տարածքային և տեղական մակարդակներով պետք է կատարվի միջազգայնորեն ընդունված չափորոշիչներով և բարոյական պաշտպանության միջոցներով<sup>59</sup>:

4. Պետք է հաստատել միջազգայնորեն համաձայնեցված միատեսակ չափորոշիչներ՝ հեշտացնելու համար փաստերի միջազգային համեմատելիությունը:

## **8. Միջազգային համագործակցություն**

1. Եվրոպայի խորհրդի անդամ երկրները պետք է համագործակցեն միմյանց հետ՝ ըստ այս ուղենիշների և համապատասխան միջազգային ու տարածաշրջանային միջոցառումների ու կարգավորությունների կիրառման օգնությամբ՝ համաձայնեցված միատեսակ կամ երկկողմանի օրենսդրության և ներքին օրենքների հիմքի վրա՝ նպատակ ունենալով ըստ հնարավորին ավելի լայն ծավալել՝

---

<sup>58</sup> Հղել Սեռական շահագործումից և սեռական բռնություններից երեխաների պաշտպանության մասին Եվրոպական խորհրդի կոնվենցիայի 37-րդ հոդվածին:

<sup>59</sup> Հղել Անհատական տվյալների մեքենայական մշակման հարցում մասնավոր անձանց պաշտպանության մասին կոնվենցիային (ETS № 108) և Անհատական տվյալների մեքենայական մշակման հարցում մասնավոր անձանց պաշտպանության մասին կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությանը՝ վերահսկողության մարմինների և տվյալների անդրսահմանային հոսքի վերաբերյալ (ETS № 181):

ա. երեխաների հանդեպ բռնության բոլոր ձևերի կանխարգելումն ու հաղթահարումը,

բ. բռնության գոհ կամ ականատես դարձած երեխաների պաշտպանությունն ու օժանդակումը,

գ. երեխաների հանդեպ բռնություն պարունակող քրեական հանցանքների հետաքննությունն ու հետապնդումը:

2. Անդամ երկրները պետք է միմյանց տրամադրեն փոխադարձ օգնության ամենալայն միջոցներ՝ երեխաների հանդեպ բռնություն պարունակող հանցանքների հետապնդման մեջ, ինչպիսիք են երեխաների առևանգումը, թրաֆիկինգը, սեռական շահագործումն ու սեռական բռնությունը:

3. Ուղենիշների իրագործումը հեշտացնելու նպատակով անդամ երկրները պետք է ինչպես հարկն է ուժեղացնեն համագործակցությունը համապատասխան միջկառավարական մարմինների, անդրազգային ցանցերի և միջազգային այլ կազմակերպությունների միջև:

4. Յուրաքանչյուր անդամ երկիր, որտեղ հնարավոր է, պետք է ճիգեր գործադրի երեխաների հանդեպ բռնության բոլոր ձևերի կանխարգելումն ու վերացումը միավորելու զարգացմանն օժանդակող ծրագրերի մեջ, որոնք նախատեսվում են երրորդ երկրներին նպաստելու համար:

## Հավելված II CM Rec(2009)10 հանձնարարականին

### Տերմինների բառացանկ

**Երեխայի բարձրագույն շահեր.** Որ երեխայի բարձրագույն շահերը պետք է լինեն առաջնային մտահոգությունը երեխաներին առնչվող բոլոր գործողություններում, մի ըմբռնում է, որ պարունակվում է ՄԱԿԵԻՄ-ի 3-րդ հոդվածում: Այն աչքի է ընկնում որպես ՄԱԿԵԻՄ-ի ընդհանուր սկզբունքներից մեկը՝ 2-րդ, 6-րդ և 12-րդ հոդվածների հետ միասին, և հատուկ նշանակություն է ստանում այն իրադրություններում, որտեղ կոնվենցիայի այլ, ավելի մասնավոր դրույթներ չեն կիրառվում: 3(1) հոդվածը շեշտում է, որ կառավարությունները և հանրային ու մասնավոր մարմինները պետք է պարզեն իրենց գործողությունների ազդեցությունը երեխաների վրա, ապահովելու համար, որ երեխայի բարձրագույն շահերը լինեն առաջնային մտահոգություն, որ հատուկ առաջնություն է տալիս երեխաներին և կառուցում է երեխաների հանդեպ բարյացակամ հասարակություն: 3(2) հոդվածն ընդգծում է պետությունների ընդհանուր գործուն պարտավորությունը անհրաժեշտ պաշտպանություն ու խնամք տրամադրելու հանուն երեխաների բարօրության բոլոր հանգամանքներում՝ միաժամանակ հարգելով ծնողների իրավունքներն ու պարտականությունները: 3(3) հոդվածը պահանջում է, որ «իրավասու մարմինների» կողմից հաստատվեն չափորոշիչներ երեխաներին առնչվող բոլոր հաստատությունների, ծառայությունների և հիմնարկների համար, և պետությունը ապահովի, որ չափորոշիչները կազմվեն ըստ *(Երեխայի իրավունքների պաշտպանության մասին Կոնվենցիայի կիրառման ձեռնարկի)*:

**Ճնշումը** կրկնվող ագրեսիվ վարքագիծ է՝ կանխամտածված կերպով ֆիզիկապես կամ հոգեպես վնասելու այլ անձի: Ճնշումը բնորոշվում է որպես անհատի վարք, որը ձգտում է ինչ-որ ձևով իշխելու այլ անձի վրա (**Բեսագ Վ.**, Ճնշողներն ու գոհերը դպրոցներում, 1989): Վարքագիծը կարող է ներառել ծաղրանուններ տալը, խոսքով կամ գրավոր վիրավորանքը, մասնակցությունից բացառելը, հանրային գործերից հեռացնելը, ֆիզիկական բռնությունը կամ հարկադրանքը (**Ուիտեդ Կ.Ս. և Դուպլեր Դ.Ռ.** Լավագույն փորձառություն կանխելու և նվազեցնելու ճնշումը դպրոցներում. Երեխաներ և դպրոցներ. հ. 27, № 3, հուլիս 2005): Ճնշողները կարող են այդպես վարվել հանրաձանաչ կամ ուժեղ համարվելու կամ ուշադրություն գրավելու համար: Նրանք կարող են ճնշում գործել նախանձից կամ այն բանից, որ իրենց են ճնշել (**Քրոթերս Լ. Մ. և Լևինսոն Է.Մ.** Ճնշման գնահատումը. մեթոդների և միջոցառումների ակնարկ, Խորհրդատվության և զարգացման հանդես, 84 (4), 2004):

**Երեխաների շահագործում:** Շահագործում տերմինն ընդգրկում է առնվազն ուրիշների մարմնավաճառության շահագործումը կամ սեռական շահագործման այլ ձևեր, հարկադիր աշխատանքն ու ծառայությունները, ստրկությունը և ստրկության նմանվող գործողությունները, տաժանակրությունը կամ օրգանների հեռացումը (Հոդված 3՝ Արձանագրություն մարդկանց, հատկապես կանանց և երեխաների թրաֆիկինգը կանխելու, դադարեցնելու և պատժելու մասին, Շարունակություն միջազգային կազմակերպված հանցագործության դեմ Միավորված ազգերի կոնվենցիայի):

**Մանկական պոռնոգրաֆիան** նշանակում է ամեն նյութ, որը տեսանելի պատկերում է իրական կամ նմանակված սեռական բացահայտ գործողության մեջ ներգրավված երեխային, կամ երեխայի սեռական օրգանների ամեն մի պատկերում՝ առաջնային սեռական նպատակների համար: Մանկական պոռնոգրաֆիային առնչվող հանցանքները ներառում են հետևյալ կանխամտածված արարքները, որոնք կատարվում են առանց իրավունքի. ա) մանկական պոռնոգրաֆիայի արտադրություն, բ) մանկական պոռնոգրաֆիայի առաջարկ կամ ցուցադրում, գ) մանկական պոռնոգրաֆիայի տարածում կամ փոխանցում, դ) սեփական կամ այլ անձի համար մանկական պոռնոգրաֆիայի հայթայթում, ե) մանկական պոռնոգրաֆիայի տիրապետում և գ) գիտակցաբար տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգնությամբ մանկական պոռնոգրաֆիայի մատչելիության ձեռքբերում (Սեռական շահագործումից և սեռական բռնություններից երեխաների պաշտպանության մասին Եվրոպական խորհրդի կոնվենցիայի 20-րդ հոդված, SETS № 201, հղել նաև Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրությանը երեխաների վաճառքի, մանկական մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին):

**Մանկական մարմնավաճառությունը** նշանակում է սեռական գործողությունների համար երեխաների օգտագործումը, երբ տրվում կամ խոստացվում է դրամական կամ այլ ձևի վարձատրություն կամ փոխհատուցում որպես վճար՝ անկախ այն բանից, արդյոք այդ վճարը, խոստումը կամ փոխհատուցումը տրվում է երեխային, թե երրորդ անձի: Մանկական մարմնավաճառության հետ կապված հանցանքները ներառում են հետևյալ կանխամտածված արարքները՝ ա) երեխային մարմնավաճառության հավաքագրելը կամ երեխային ստիպելը մասնակցել մարմնավաճառությանը, բ) երեխային մարմնավաճառության հարկադրելը կամ դրանից օգտվելը, կամ այդ նպատակով երեխային այլ կերպ շահագործելը, գ) մանկական մարմնավաճառության դիմելը (Սեռական շահագործումից և սեռական բռնություններից երեխաների պաշտպանության մասին Եվրոպական խորհրդի կոնվենցիայի 19-րդ հոդված, SETS № 201, հղել նաև Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրությանը երեխաների վաճառքի, մանկական մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին):

**Երեխաների թրաֆիկինգը** նշանակում է երեխաների հավաքագրում, տեղափոխում, հանձնում, թաքցնում կամ ընդունում շահագործման նպատակով, եթե նույնիսկ դա չի ներառում այս հոդվածի (ա) ենթակետում շարադրված որևէ միջոց (սպառնալիք կամ ուժի կիրառում կամ հարկադրանքի, առևանգման, խաբեության, խորամանկության, ուժային ոտնձգության կամ խոցելիության դիրքի, վճար կամ նպաստ տալու կամ ստանալու և այլ ձևերի կիրառում՝ մեկի վրա իշխանություն ունեցող անձի կողմից մյուսի համաձայնությունը կորզելու համար) - Հոդված 3՝ Արձանագրություն մարդկանց, հատկապես կանանց և երեխաների թրաֆիկինգը

կանխելու, դադարեցնելու և պատժելու մասին, Շարունակություն միջազգային կազմակերպված հանցագործության դեմ Միավորված ազգերի կոնվենցիայի: Տե՛ս նաև թրաֆիկինգի սահմանումը ստորև:

**Մարմնական պատիժը** բռնության ձև է, որ սահմանվում է որպես որևէ պատիժ, որտեղ կիրառվում է ֆիզիկական ուժ և ուղղված է երեխային որոշ աստիճանի ցավ կամ նեղություն պատճառելուն, թեկուզ և թեթև (մանրամասն սահմանման համար տե՛ս Երեխայի իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն № 8, կետ 11):

**Երեխաների կոռուպցիան** նշանակում է սեռական նպատակներով կանխամտածված կերպով ստիպել երեխային, որը պետականորեն սահմանված տարիք չունի սեռական կապի համար, ականատես լինել սեռական բռնությանը կամ սեռական գործողություններին, նույնիսկ առանց մասնակցելու (Հոդված 22, Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, CETS № 201):

**Վնասակար ավանդական գործողություններ:** Աշխարհում յուրաքանչյուր սոցիալական խմբավորում ունի յուրահատուկ ավանդական մշակութային գործողություններ և հավատալիքներ, որոնցից մի քանիսը նպաստավոր են բոլոր անդամներին, մինչդեռ մյուսները վնասակար են որոշակի խմբի, օրինակ, կանանց համար: Վնասակար ավանդական գործողությունները ներառում են իզական սեռական անդամների խեղումը, վաղ ամուսնությունը, աղջիկների մանկասպանությունը, պատվի համար սպանությունը, վաղ հղիությունը և այլն (տե՛ս Ամփոփաթեթ № 23, Կանանց և երեխաների առողջության վրա ազդող վնասակար ավանդական գործողություններ, [www.ohchr.org/Documents/Publications/FactSheet23en.pdf](http://www.ohchr.org/Documents/Publications/FactSheet23en.pdf)):

**Խմբական ճնշումը** ճնշում է խմբով: Սա խմբական գրոհ է որևէ մեկի վրա՝ օգտագործելով բամբասանքի, զրպարտության, վարկաբեկման, մեկուսացման, ահ տալու տակտիկա, և ամենից առաջ, ձևացնելով, թե նշավակված անձն է պատասխանատուն: Բնչպես հատուկ է բռնության շատ իրավիճակների համար, կատարողները պնդում են, որ զոհը «արժանի է» դրան (Elliott G. P. School Mobbing and Emotional Abuse, [www.selfgrowth.com/articles/Elliott9.html](http://www.selfgrowth.com/articles/Elliott9.html)):

**Վերահսկումը (մշտադիտումը)** իշխանության գործունեությունն է, ապահովելու համար երեխայի բարօրության օրենսդրության պահպանումը: Այն բաղկացած է հետևյալ երեք առանձին տարրերից՝ ա) օրենքներ և կանոնակարգեր տվող կենտրոնական իշխանություն, բ) տեղական մակարդակ և երեխայի խնամքի անհրաժեշտ ծառայություններ մատուցող հաստատություններ և գ) տեղական մակարդակում վերահսկում իրականացնող անկախ մարմին: Վերահսկումը պետք է կատարվի ազդարարված կամ չազդարարված ստուգումներով կամ ղեկավար համակարգի հաշվեստուգումներով: Ազգային վերահսկողության չափորոշված ռեժիմի հաստատումը հեշտացնում է երկրում երեխաների բարօրության մասին վիճակագրության հավաքումը և օգնում է կառավարական որոշումներ ընդունելուն:

**Անփութությունը** նշանակում է ծնողների կամ խնամողների կողմից երեխայի ֆիզիկական կամ զգացմունքային կարիքների բավարարման ձախողումը, երբ դրա համար նրանք ունեն միջոցներ, գիտելիքներ և անհրաժեշտ ծառայություններ ստանալու հնարավորություն, կամ երեխային վտանգի ենթարկվելուց պաշտպանելու ձախողումը (ՄԱ Գլխավոր քարտուղարի համաշխարհային զեկույցը երեխաների հանդեպ բռնության մասին):

**Երեխայի մասնակցությունը պոռնոգրաֆիական ներկայացմանը:** Պոռնոգրաֆիական ներկայացմանը երեխայի մասնակցության հետ կապված հանցանքները ներառում են հետևյալ կանխամտածված արարքները՝ ա) երեխային հավաքագրելը պոռնոգրաֆիական ներկայացմանը մասնակցելու համար կամ պատճառ դառնալը, որ երեխան մասնակցի այդպիսի ներկայացմանը, բ) երեխային հարկադրելը մասնակցելու պոռնոգրաֆիական ներկայացմանը կամ դրանից օգտվելը, կամ այլ կերպ երեխային շահագործելը, գ) գիտակցաբար հաճախելը երեխաների մասնակցությունը ներառող պոռնոգրաֆիական ներկայացումների (Հոդված 21, Մեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, CETS № 201):

**Հոգեբանական բռնությունը** վերաբերում է վիրավորանքներին, ծաղրանուններին, անտեսմանը, մեկուսացմանը, մերժմանը, սպառնալիքներին, մեքենայություններին, զգացմունքային անտարբերությանը, նվաստացմանը, տնային բռնությանն ականատես լինելուն, և այլ վարմունքների, որոնք կարող են վնասակար լինել երեխայի հոգեբանական զարգացման և բարօրության համար (ՄԱ Գլխավոր քարտուղարի համաշխարհային զեկույցը երեխաների հանդեպ բռնության մասին):

**«Սեքս-տուրիզմը»** նշանակում է ճանապարհորդություններ՝ կազմակերպված զբոսաշրջության հատվածի մեջ մտնողների կողմից կամ այդ հատվածի դրսից, բայց օգտագործելով դրա կառուցվածքները և ցանցերը՝ առաջնային նպատակ ունենալով առևտրական սեռական հարաբերություններ իրականացնել զբոսաշրջիկների և ճամփորդության հանգրվանի բնակիչների միջև (Համաշխարհային զբոսաշրջության կազմակերպության (UNWTO, ՄԱՀԶԿ) հայտարարությունը կազմակերպված սեքս-տուրիզմի կանխարգելման մասին (1995):

**Սեռական բռնություն:** Երեխաների հանդեպ սեռական բռնության հետ կապված հանցանքները ներառում են հատկապես կանխամտածված արարքները՝ ա) սեռական գործողության մեջ մտնելը երեխայի հետ, որը համաձայն ազգային օրենսդրության համապատասխան դրույթների չի հասել սեռական գործունեության օրինական տարիքին (սա չի վերաբերում անչափահասների միջև փոխադարձ համաձայնությամբ սեռական գործողություններին) և բ) սեռական գործողության մեջ մտնելը երեխայի հետ, երբ կիրառվել է հարկադրանք, ուժ կամ սպառնալիք, կամ բռնությունը կատարվել է երեխայի կողմից ճանաչված վստահության, հեղինակության կամ ազդեցության դիրքից ելնելով՝ ներառյալ ընտանիքի ներսում, կամ բռնությունը կատարվել է երեխայի առանձնահատուկ խոցելի վիճակից, հատկապես մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամությունից կամ էլ կախվածության վիճակից օգտվելով (Հոդված 18, Մեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, CETS № 201):

**Երեխաների վաճառքը** նշանակում է որևէ գործարք, որի ընթացքում երեխան որևէ անձի կամ անձանց խմբի կողմից փոխանցվում է մեկ ուրիշին՝ վճարով կամ որևէ այլ նկատառումով (Հոդված 2, Կամբոդիայի արձանագրություն երեխաների վաճառքի, մանկական մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին):

**Երեխաների գայթակղությունը սեռական նպատակներով:** Սեռական նպատակներով երեխաների գայթակղության հետ կապված հանցանքները ներառում են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով մեծի կողմից կանխամտածված առաջարկ՝ հանդիպելու երեխայի հետ, որը չի հասել սեռական գործունեության համար պետականորեն նշանակված օրինական տարիքին՝ երեխայի հետ սեռական գործողության մեջ մտնելու կամ մանկական պոռնոգրաֆիա արտադրելու նպատակով, և եթե այս առաջարկին հետևել են այդպիսի հանդիպմանը տանող նյութական գործողություններ (Հոդված 23, Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, CETS № 201):

**Մարդկանց թրաֆիկինգը** ներառում է մարդկանց հավաքագրում, տեղափոխում, հանձնում, թաքցնում կամ ընդունում սպառնալիքների կամ բռնի ուժի օգնությամբ կամ այլ տեսակի հարկադրանքի, առևանգման, խաբեության, խորամանկության, ուժային ոտնձգության կամ խոցելիության դիրքի, վճար կամ նպաստ տալու կամ ստանալու և այլ ձևերի կիրառումով՝ մեկի վրա իշխանություն ունեցող անձի կողմից շահագործման նպատակով մյուսի համաձայնությունը կորզելու համար: «Շահագործումը» կներառի առնվազն ուրիշների մարմնավաճառության շահագործումը կամ սեռական շահագործման այլ ձևերը, հարկադրական աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկության նմանվող գործողությունները, տաժանակրությունը կամ օրգանների հեռացումը: «Մարդկանց թրաֆիկինգի» գոհի համաձայնությունը ապագա շահագործմանը էական չէ, եթե կիրառվել է վերը նշված միջոցներից որևէ մեկը: Երեխայի հավաքագրումը, տեղափոխումը, հանձնումը, թաքցնումը կամ ընդունումը շահագործման նպատակով պետք է համարվի «մարդկանց թրաֆիկինգ», եթե նույնիսկ այն չի ներառում վերը բերված միջոցներից որևէ մեկը (Հոդված 4, Եվրոպայի խորհրդի Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի գործողությունների կոնվենցիա, CETS № 197):

## Երեխայի իրավունքների պահպանմանը և բռնությունից երեխաների պաշտպանությանն ուղղված միջազգային տեքստեր

### Միավորված ազգերի պայմանագրեր

- Կոնվենցիա երեխաների իրավունքների մասին GA Res. 44/25, 44 UN GAOR Sup (№ 49) at 167, UN Doc A/44/49 (1989), ուժի մեջ է մտել 1990թ. սեպտեմբերի 2-ին
- Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրություն զինված ընդհարումների մեջ երեխաների ներքաշվելու մասին: GA Res. 54/263 հավելված I, 54 UN GAOR Sup (№ 49) at 7, UN Doc A/54/49 Vol. III (2000), ուժի մեջ է մտել 2002թ. փետրվարի 12-ին
- Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրություն երեխաների վաճառքի, մանկական մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին, GA Res. 54/263 հավելված II, 54 UN GAOR Sup (№ 49) at 6, UN Doc A/54/49 Vol. III (2000), ուժի մեջ է մտել 2002թ. հունվարի 18-ին
- Միջազգային դաշնագիր քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին: Ընդունվել և բացվել է ստորագրության, վավերացման և միացման համար Գլխավոր ասամբլեայի 1966թ. դեկտեմբերի 16-ի 2200 A (XXI) բանաձևով, ուժի մեջ է մտել 1976թ. մարտի 23-ին՝ 49-րդ հոդվածի համաձայն
- Միջազգային դաշնագիր սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների մասին: Ընդունվել և բացվել է ստորագրության, վավերացման և միացման համար Գլխավոր ասամբլեայի դեկտեմբերի 16-ի 2200 A (XXI) բանաձևով, 1966թ. դեկտեմբերի 16-ին, ուժի մեջ է մտել 1976թ. հունվարի 3-ին՝ 27-րդ հոդվածի համաձայն
- Կոնվենցիա խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին, ընդունվել և բացվել է ստորագրության, վավերացման և միացման համար Գլխավոր ասամբլեայի 1984թ. դեկտեմբերի 10-ի 39/46 բանաձևով, ուժի մեջ է մտել 1987թ. հունիսի 26-ին՝ 27.1 հոդվածի համաձայն
- Միջազգային դաշնագիր ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին: Ընդունվել է Գլխավոր ասամբլեայի 1965թ. դեկտեմբերի 21-ի 2106 բանաձևով, ուժի մեջ է մտել 1969թ. հունվարի 4-ին՝ 19-րդ հոդվածի համաձայն
- Միջազգային դաշնագիր բոլոր ներգաղթած աշխատողների և նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանության մասին, ընդունված Գլխավոր ասամբլեայի 1990թ. դեկտեմբերի 18-ի 45/158 բանաձևով
- Դաշնագիր կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին, Նյու Յորք, 1979թ. դեկտեմբերի 18: Ընդունվել է Միավորված ազգերի գլխավոր ասամբլեայի կողմից: Ուժի մեջ է մտել որպես միջազգային պայմանագիր 1981թ. սեպտեմբերի 3-ին
- Կոնվենցիա հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների մասին: Ընդունվել է Գլխավոր ասամբլեայի 61/106 բանաձևով 2006թ. դեկտեմբերի 13-ին, ուժի մեջ է մտել 2008թ. մայիսին:
- Կոնվենցիա երեխայի աշխատանքի վատթար ձևերի կանխարգելման և վերացման համար անհապաղ գործողության մասին (ILO № 182) 38 ILM 1207 (1999), ուժի մեջ է մտել 2000թ. նոյեմբերի 19-ին:

- Կոնվենցիա աշխատանքի և ծառայության ընդունման նվազագույն տարիքի վերաբերյալ (ILO № 138), ընդունվել է 1973թ. հունիսի 26-ին, ուժի մեջ է մտել 1976թ. հունիսի 19-ին
- Արձանագրություն մարդկանց, հատկապես կանանց և երեխաների թրաֆիկինգը կանխելու, դադարեցնելու և պատժելու մասին, շարունակություն միջազգային կազմակերպված հանցագործության դեմ Միավորված ազգերի կոնվենցիայի: Ընդունվել և բացվել է ստորագրության, վավերացման և միացման համար 2000թ. նոյեմբերի 15-ին Գլխավոր ասամբլեայի 55/25 բանաձևով

### **Եվրոպայի խորհրդի պայմանագրեր**

- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա (ETS №5. 1950/1953)
- Եվրոպական սոցիալական խարտիա (ETS №35. 1961/1965)
- Եվրոպական սոցիալական խարտիա (վերանայված) (ETS №163. 1996/1999)
- Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիա (ETS №126. 1987/1989)
- Սեռական շահագործումից կամ սեռական բռնություններից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (ETS №201. 2007/...)
- Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի գործողությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (ETS №197. 2005/2008)
- Երեխաների հետ շփման մասին կոնվենցիա (ETS №192. 2003/2005)
- Կիրեռհանցագործությունների մասին կոնվենցիա (ETS №185. 2001/2004)
- Անհատական տվյալների մեքենայական մշակման հարցում մասնավոր անձանց պաշտպանության մասին կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն վերահսկողության մարմինների և տվյալների անդրսահմանային հոսքի վերաբերյալ (ETS №181. 2001/2004)
- Երեխաների իրավունքների իրականացման մասին եվրոպական կոնվենցիա (ETS №160. 1996/2000)
- Անհատական տվյալների մեքենայական մշակման հարցում մասնավոր անձանց պաշտպանության մասին կոնվենցիա (ETS №108. 1981/1985)
- Երեխաների խնամակալության և երեխաների խնամակալության վերականգնման վերաբերյալ որոշումների ճանաչման և դրանց կատարման մասին եվրոպական կոնվենցիա (ETS №105. 1980/1983)
- Երեխաների որդեգրման վերաբերյալ եվրոպական կոնվենցիա (ETS №58. 1967/1968)
- Երեխաների որդեգրման վերաբերյալ եվրոպական կոնվենցիա (վերանայված) (CETS №202. 2008/...)

### **Միջազգային մասնավոր իրավունքի Հաագայի կոնֆերանս**

- Հաագայի կոնվենցիա երեխաների միջազգային առևանգման քաղաքացիական հայեցակետի մասին (կնքված 1980թ. հոկտեմբերի 25-ին/ ուժի մեջ է մտել 1983թ. դեկտեմբերի 1-ին)

- Հաագայի կոնվենցիա արդարադատության, կիրառելի օրենքի, ճանաչման, կատարման և համագործակցության մասին՝ ծնողական պատասխանատվության հարգանքի և երեխաների պաշտպանության միջոցառումների տեսակետից (կնքված 1996թ. հոկտեմբերի 19-ին/ ուժի մեջ է մտել 2002թ. հունվարի 1-ին)
- Հաագայի կոնվենցիա երեխաների պաշտպանության և համագործակցության մասին՝ միջերկրային որդեգրության տեսակետից (կնքված 1993թ. մայիսի 29-ին/ ուժի մեջ է մտել 1995թ. մայիսի 1-ին)
- Հաագայի կոնվենցիա երեխաների հանդեպ ալիմենտային պարտավորությունների կատարման կիրառելի օրենքի մասին (կնքված 1956թ. հոկտեմբերի 24-ին/ ուժի մեջ է մտել 1962թ. հունվարի 1-ին)
- Հաագայի կոնվենցիա երեխաների հանդեպ ալիմենտային պարտավորություններին վերաբերող որոշումների ճանաչման և կատարման առնչությամբ (կնքված 1958թ. ապրիլի 15-ին/ ուժի մեջ է մտել 1962թ. հունվարի 1-ին)

### **Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականները**

- Հանձնարարական Rec(2009)5 երեխաներին վնասակար բովանդակությունից և վարքագծից պաշտպանելու և նոր տեղեկատվական ու հաղորդակցական միջավայրում նրանց գործուն մասնակցությունը խթանելու միջոցառումների մասին
- Հանձնարարական Rec(2008)11 պատժի կամ միջոցառումների ենթակա անչափահաս իրավախախտների համար եվրոպական կանոնների մասին
- Հանձնարարական Rec(2008)6 համացանցային ֆիլտրերի առնչությամբ արտահայտման և տեղեկատվական ազատության նկատմամբ հարգանքի խթանման միջոցառումների մասին
- Հանձնարարական Rec(2008)4 տարաբնակների երեխաների և անցյալում ներգաղթածների երեխաների ներգրավումը ուժեղացելու մասին
- Հանձնարարական Rec(2007)13 կրթության մեջ գենդերային հիմնուղիների մասին
- Հանձնարարական Rec(2007)9 ներգաղթած անտերունչ անչափահասների կյանքի ծրագրերի մասին
- Հանձնարարական Rec(2006)19 դրական ծնողական խնամաձությանը սատարող քաղաքականության մասին
- Հանձնարարական Rec(2006)12 նոր տեղեկատվական և հաղորդակցական միջավայրում երեխաներին գորակցելու մասին
- Հանձնարարական Rec(2006)5 հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին և հասարակական կյանքին լիիրավ մասնակցությանը աջակցելու՝ Եվրոպայի խորհրդի գործողությունների պլանի մասին. հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակի լավացումը Եվրոպայում 2006-2015թթ. ընթացքում
- Հանձնարարական Rec(2006)2 Եվրոպական բանտային կանոնների մասին
- Հանձնարարական Rec(2006)1 երիտասարդներին վերաբերող քաղաքականության զարգացման մեջ ազգային երիտասարդական խորհուրդների դերի մասին
- Հանձնարարական Rec(2005)5 փակ հիմնարկներում ապրող երեխաների իրավունքների մասին
- Հանձնարարական Rec(2004)13 տեղական և տարածքային կյանքին երիտասարդների մասնակցության մասին

- Հանձնարարական Rec(2003)20 անչափահասների իրավախատումների և անչափահասների արդարադատության դերի հետ գործ ունենալու նոր ուղիների վերաբերյալ
- Հանձնարարական Rec(2002)12 հանուն ժողովրդավարական քաղաքացիության կրթության մասին
- Հանձնարարական Rec(2002)8 երեխաների ցերեկային խնամքի մասին
- Հանձնարարական Rec(2002)5 բռնությունից կանանց պաշտպանության մասին
- Հանձնարարական Rec(2001)16 երեխաներին սեռական բռնությունից պաշտպանելու մասին
- Հանձնարարական Rec(2001)10 Ոստիկանների բարոյականության եվրոպական կանոնագրքի մասին
- Հանձնարարական Rec(2001)8 կիրեռքովանդակության ինքնակարգավորման վերաբերյալ
- Հանձնարարական №R(2000)11 սեռական շահագործման համար մարդկանց թրաֆիկինգի դեմ գործողությունների մասին
- Հանձնարարական №R(98)8 ընտանեկան և հասարակական կյանքին երեխաների մասնակցության մասին
- Հանձնարարական №R(97)19 էլեկտրոնային լրատվամիջոցներում բռնության պատկերման մասին
- Հանձնարարական №R(97)13 վկաների ահաբեկման և նրանց պաշտպանության իրավունքների վերաբերյալ
- Հանձնարարական №R(94)14 կապակցված և միասնական ընտանեկան քաղաքականության մասին
- Հանձնարարական №R(93)2 երեխաների հանդեպ բռնության բժշկասոցիալական հայեցակետերը
- Հանձնարարական №R(91)11 սեռական շահագործման, պոռնոգրաֆիայի և երեխաների ու երիտասարդ չափահասների մարմնավաճառության ու թրաֆիկինգի վերաբերյալ
- Հանձնարարական №R(91)9 ընտանեկան գործերում արտակարգ միջոցառումների մասին
- Հանձնարարական №R(90)2 ընտանիքում բռնությանը վերաբերող սոցիալական միջոցառումների մասին
- Հանձնարարական №R(87)6 որդեգրող ընտանիքների մասին
- Հանձնարարական №R(85)4 ընտանիքում բռնության մասին
- Հանձնարարական №R(79)17 վատ վերաբերմունքից երեխաների պաշտպանության վերաբերյալ

#### **Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի որոշումները**

- Որոշում ResAP(2005)1 հաշմանդամություն ունեցող մեծերին և երեխաներին բռնությունից պաշտպանելու մասին

#### **Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հանձնարարականները (1987-2009)**

- Հանձնարարական 1861 (2009) կանանց սպանության մասին
- Հանձնարարական 1854 (2009) հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների և հասարակության կյանքին լիակատար ու գործուն մասնակցության մատչելիության մասին
- Հանձնարարական 1849 (2008) ժողովրդավարության մշակույթի և մարդու իրավունքների սատարումը ուսուցիչների կրթության միջոցով
- Հանձնարարական 1828 (2008) ապօրինի որդեգրության համար Եվրոպայում նորածին մանուկների անհետացման մասին
- Հանձնարարական 1815 (2007) մարմնավաճառության մասին՝ ի՞նչ դիրք ընդունել
- Հանձնարարական 1778 (2007) տուժած երեխաների մասին՝ բռնության, շահագործման և չարաշահման բոլոր ձևերի վերացումը
- Հանձնարարական 1703 (2005) ապաստան փնտրող բաժանված երեխաների պաշտպանության և օժանդակության մասին
- Հանձնարարական 1698 (2005) հաստատություններում երեխաների իրավունքների մասին՝ խորհրդարանական վեհաժողովի 1601 (2003) հանձնարարականի հետագա կատարումը
- Հանձնարարական 1666 (2004) երեխաների մարմնական պատիժների համաեվրոպական արգելքի մասին
- Հանձնարարական 1596 (2003) Եվրոպայում երիտասարդ տարաբնակների վիճակի մասին
- Հանձնարարական 1632 (2003) վատառողջ դեռահասների մասին՝ սոցիալական և առողջապահական մոտեցում պատանիների տկարությանը
- Հանձնարարական 1601 (2003) հաստատություններում լքված երեխաների վիճակի բարելավման մասին
- Հանձնարարական 1561 (2002) հարավարևելյան Եվրոպայում պատերազմի երեխաների համար սոցիալական միջոցառումների մասին
- Հանձնարարական 1555 (2002) լրատվամիջոցներում կնոջ կերպարի մասին
- Հանձնարարական 1551 (2002) երեխաների հետ և նրանց համար 21-րդ դարի հասարակություն կառուցելու մասին
- Հանձնարարական 1545 (2002) կանանց թրաֆիկինգի դեմ քարոզարշավի մասին
- Հանձնարարական 1532 (2001) քաղաքներում և ավաններում երեխաների և պատանիների համար դինամիկ սոցիալական քաղաքականության մասին
- Հանձնարարական 1526 (2001) անչափահասների թրաֆիկինգի դեմ քարոզարշավի մասին՝ վերջ դնելու համար արևելաեվրոպական ճանապարհին. Մոլդովայի օրինակը
- Հանձնարարական 1523 (2001) տնային ստրկության մասին
- Հանձնարարական 1501 (2001) երեխաների կրթության համար ուսուցիչների և ծնողների պատասխանատվության մասին
- Հանձնարարական 1466 (2000) լրատվամիջոցներով կրթության մասին
- Հանձնարարական 1460 (2000) երեխաների համար եվրոպական օմբուդսմեն նշանակելու մասին
- Հանձնարարական 1459 (2000) Կոսովոյի երեխաների համար գործողությունների պլան
- Հանձնարարական 1449 (2000) հարավային միջերկրածովյան երկրներից Եվրոպա ապօրինի ներգաղթի մասին

- Հանձնարարական 1443 (2000) միջազգային որդեգրության մասին. երեխաների իրավունքների հարգումը
- Հանձնարարական 1398 (1999) Ալբանիայում երեխաների դրության մասին
- Հանձնարարական 1371 (1998) երեխաների հանդեպ բռնության և անվտանգության մասին
- Հանձնարարական 1336(1997) երեխաների աշխատանքի շահագործման դեմ պայքարը առաջնային խնդիր համարելու մասին
- Հանձնարարական 1286 (1996) երեխաների համար եվրոպական ռազմավարության մասին
- Հանձնարարական 1121 (1990) երեխաների իրավունքների մասին
- Հանձնարարական 1065 (1987) երեխաների վաճառքի և երեխաների շահագործման այլ ձևերի մասին

### Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի որոշումները (1996-2009)

- Որոշում 1654 (2009) կանանց սպանությունների մասին
- Որոշում 1624 (2008) երեխաների հանդեպ բռնության առաջին ձևը՝ ծնվելուց հետո նրանից հրաժարվելը կանխելու մասին
- Որոշում 1587 (2007) Բալկաններում հետհակամարտային գոտիներում ապրող երեխաների վիճակի մասին
- Որոշում 1579 (2007) մարմնավաճառության մասին՝ ի՞նչ դիրք ընդունել
- Որոշում 1530 (2007) տուժած երեխաների մասին՝ բռնության, շահագործման և չարաշահման բոլոր ձևերի վերացումը
- Որոշում 1337 (2003) կանանց թրաֆիկինգի և մարմնավաճառության հետ կապված տարագրության մասին
- Որոշում 1307 (2002) երեխաների սեռական շահագործման մասին. ոչ մի հանդուրժում
- Որոշում 1291 (2002) ծնողներից մեկի կողմից երեխաների միջազգային առևանգման մասին
- Որոշում 1247 (2001) իգական սեռական անդամների խեղման մասին
- Որոշում 1215 (2000) երեխաներին զինվորագրելու և զինված ընդհարումներում նրանց մասնակցության դեմ քարոզարշավի մասին
- Որոշում 1212 (2000) զինված ընդհարումներում ավերածության մասին
- Որոշում 1099 (1996) երեխաների սեռական շահագործման մասին

### Հանձնարարականներ Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսից

- Հանձնարարական 253 (2008) փողոցներում ապրող և/կամ աշխատող երեխաների սոցիալական վերաներգրավման մասին
- Հանձնարարական 242 (2008) տեղական և տարածքային մակարդակներում երեխաների և երիտասարդների մասնակցության մասին
- Հանձնարարական 241 (2008) «Երեխան քաղաքում»
- Հանձնարարական 135 (2003) դպրոցներում բռնությունը կանխելու և հաղթահարելու համար տեղական համագործակցության մասին

- Հանձնարարական 53 (1999) կարիքավոր երեխաների/դեռահասաների և ընտանիքների նկատմամբ քաղակաքանությունների մասին

### **Եվրոպայի խորհրդի այլ փաստաթղթեր**

- Եվրոպայի խորհրդի ուղենիշները օժանդակելու համար համացանցային ծառայություններ մատուցողներին՝ տեղեկատվական հասարակության մեջ մարդու գլխավոր իրավունքների և հիմնարար ազատությունների մասին նրանց գործնական ըմբռնման և դրանց համապատասխանելու գործում, մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն (2008):
- Եվրոպայի խորհրդի ուղենիշները օժանդակելու համար առցանց խաղեր մատակարարողներին՝ տեղեկատվական հասարակության մեջ մարդու գլխավոր իրավունքների և հիմնարար ազատությունների մասին նրանց գործնական ըմբռնման և դրանց համապատասխանելու գործում, մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն (2008):
- Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հայտարարությունը համացանցում երեխաների արժանապատվությունը, ապահովությունը և մասնավոր կյանքը պաշտպանելու մասին (2008թ. փետրվարի 6)
- Հանձնարարականներ և ուղենիշներ նպաստելու հաշմանդամություն ունեցող երեխաների համար ապրող համայնք ունենալուն, փակ հաստատություններից նրանց հանելուն, ինչպես նաև ընտանիքներին իրենց հաշմանդամ երեխային տանը խնամելուն օգնելու վերաբերյալ, Եվրոպայի խորհուրդ (2008):
- Բրաուն Ն. *Պաշտպանել բռնությունից հաշմանդամ երեխաներին և մեծերին*, Եվրոպայի խորհրդի հրատարակություն, Ստրասբուրգ (2003), ISBN 92-871-4919-4:

### **Հավելված IV CM Rec(2009)10 հանձնարարականին**

#### **Այլ գործողություններ և հրատարակություններ**

#### **Միջազգային հայտարարություններ/օրակարգեր գործողությունների/ուղենիշների համար**

- Ռիո դե Ժանեյրոյի պակտը երեխաների և դեռահասաների սեռական շահագործումը կանխելու և դադարեցնելու մասին, Երեխաների և դեռահասաների սեռական շահագործման դեմ 3-րդ համաշխարհային կոնգրես: Ռիո դե Ժանեյրո, 2008թ. նոյեմբերի 25-28
- «Բռնություն երեխաների հանդեպ», Միավորված ազգերի Գլխավոր քարտուղարի ուսումնասիրությունը, 2006թ. օգոստոսի 29
- «Դադարեցնել բռնությունը երեխաների հանդեպ: Գործել անմիջապես», տարածքային խորհրդակցության զեկույցը երեխաների հանդեպ բռնության մասին Միավորված ազգերի ուսումնասիրության համար, 2005թ. հուլիսի 5-7, Լյուբլյանա, Սլովենիա
- Յոկոհամայի համընդհանուր պարտավորությունը՝ ընդունված Երեխաների առևտրական սեռական շահագործման դեմ 2-րդ համաշխարհային կոնգրեսում, Յոկոհամա, Ճապոնիա, 2001թ. դեկտեմբերի 17-20

- Հայտարարություն և գործողությունների օրակարգ՝ ընդունված Երեխաների առևտրական սեռական շահագործման դեմ 1-ին համաշխարհային կոնգրեսում, Ստոկհոլմ, Շվեդիա, 1996թ. օգոստոսի 27-31:
- Վարչակազմի հայտարարությունը և գործողությունների պլանը՝ ընդունված Եվրոպայի խորհրդի պետությունների ղեկավարների 3-րդ գագաթաժողովում, Վարշավա, 2005թ. մայիսի 16-17:
- Եզրափակիչ հայտարարություն և գործողությունների պլան՝ ընդունված Եվրոպայի խորհրդի պետությունների ղեկավարների 2-րդ գագաթաժողովում, Ստրասբուրգ, 1997թ. հոկտեմբերի 10-11:
- Պարտավորություն և գործողությունների պլան՝ ընդունված Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի մասնակիցների կողմից՝ «Երեխաների պաշտպանությունը սեռական շահագործումից» խորհրդաժողովում, Բուդապեշտ, 2001թ. նոյեմբերի 20-21:
- Միավորված ազգերի Կանոնները ազատագրված անչափահասներին պաշտպանելու համար 1990
- Միավորված ազգերի Նվազագույն չափորոշիչ կանոնները ոչ-խնամակալական միջոցառումների համար («Տոկիոյի կանոններ», 1990)
- Միավորված ազգերի Նվազագույն չափորոշիչ կանոնները անչափահասների արդարադատության իրագործման համար («Պեկինի կանոններ», 1995)
- «Երեխաներին հարմարեցված աշխարհ», ՄԱ գլխավոր ասամբլեայի արդյունքների փաստաթուղթը՝ ընդունված 2002թ. մայիսի 10-ին:

## **Այլ հրապարակումներ**

Besag V. Bullies and Victims in Schools, 1989

Crothers L.M. and Levinson E.M., Assessment of Bullying: A review of methods and instruments, Journal of Councelling and Development, 84 (4), 2004

Witted K.S. and Dupper D.R., Best Practices for Preventing or Reducing Bullying in Schools. Children and Schools. Vol. 27, № 3, July 2005.